



**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

1.1	Ձեռնարկողի մասին տեղեկություն .....	3
1.2	Հապավումներ .....	3
1.3	Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը.....	4
1.4	Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ) .....	7
1.4.1	Նախատեսվող գործունեության նկարագիր .....	7
1.4.2	Տեղամասի երկրաբանա-լիթոլոգիական կառուցվածքը .....	10
1.4.3	Նախատեսվող աշխատանքների կազմակերպում .....	16
1.4.4	Առաջարկություններ օբյեկտի շինարարության կազմակերպման վերաբերյալ.....	16
1.4.5	Առաջարկություններ օբյեկտի շինարարության մատակարարման կազմակերպման վերաբերյալ.....	17
1.4.6	Կադրային ապահովում և շինտեխնիկա .....	19
1.4.7	Նյութերի և բնառեսուրսների օգտագործում.....	21
2.	ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ.....	25
2.1	ՖԻԶԻԿԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ.....	25
2.2	ԿԼԻՄԱՆ.....	27
2.3	Օդային ավազան .....	29
2.4	Ջրային ռեսուրսներ.....	31
2.5	Հողերի նկարագիրը .....	32
2.6	Հողային ռեսուրսներ.....	32
2.7	Կենսաբազմազանություն .....	33
2.8	Թափոնների կառավարում.....	35
3	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ.....	36
3.1	ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ.....	36
3.2	ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ.....	37
3.3	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ.....	37
3.3.1	ՄԹՆՈԼՈՂՐՏԱՅԻՆ ՕԴ.....	37
3.3.2	ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՄՆԵՐ.....	38
3.3.3	ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՄՆԵՐ.....	38
3.3.4	ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ.....	39
3.3.5	ԱՂՄՈՒԿԻ և ԹՐԹՈՒՒՄՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ.....	41
4.	ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ.....	41
	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ.....	43
	ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ.....	46
	ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	47
	ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ.....	48

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### 1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն

1.2 Ձեռնարկող՝	<<Բոզոյան>> ՍՊԸ
1.3 Ձեռնարկողի փաստացի գործունեության հասցեն՝	ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գ. Մեծավան, Դաշտամիջյան փ 1 պարիսպ հասցե
1.5 Նախատեսվող գործունեության վարչական տարածքը՝	ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, բնակավայր Մեծավան

### 1.2 Հապավումներ

ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն

ՓԲԸ՝ Փակ Բաժնետիրական Ընկերություն

ՍՊԸ՝ Սահմանափակ պատասխանատվությամ ընկերություն

ՊՈԱԿ՝ Պետական ոչ առևտրային կազմակերպություն

ԱԶ՝ Անհատ Ձեռնարկատեր

### 1.3 Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գ. Մեծավան, Դաշտամիջյան փ 1 պարիսպ հասցեում նախատեսվում է կառուցել ծածկարան 1 և ծածկարան 2:

Ծածկարանների կառուցման աշխատանքային նախագիծը իրականացված է ՀՀ- ում գործող նորմատիվ փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

Համաձայն ՀՀ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենքի (21 հունիս, 2014թ.) /խմբագրված 2023թ/ Հոդված 12, կետ 8) քաղաքաշինության բնագավառում՝ ա.քաղաքաշինական գործունեության օբյեկտների կառուցում՝ 1500 քմ և ավելի վերգետնյա ամենամեծ կառուցապատման մակերեսով կամ 2000քմ և ավելի ստորգետնյա ամենամեծ կառուցապատման մակերեսով, կառուցապատման մակերես ունեցող քաղաքաշինության ոլորտի նախագծերը դասվում են «Բ» կատեգորիայի, որի համար պահանջվում է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն (ՇՄԱԳ հաշվետվություն) փաստաթղթի պատրաստում և շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության իրականացում:

Ծածկարանների կառուցման աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի պահանջներին համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է գործունեության ենթակա տարածքի բնապահպանական ելակետային պայմանները, գործունեության իրականացման համար նախատեսվող աշխատանքները և գործողությունները, գործունեության իրականացման արդյունքում բնապահպանական հնարավոր ազդեցության շրջանակը և գնահատականը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

ՀՀ գործող օրենսդրությունը պահանջում է նախատեսվող գործունեության համար իրականացնել հանրության տեղեկացում և քննարկումներ նախագծման, շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման, փորձաքննության փուլերում:

Նախատեսվող գործունեության նախնական գնահատման փուլում Մեծավան բնակավայրում արդեն իսկ անցկացվել են հանրային քննարկումներ:

### **Իրավական հիմքերը**

Նախատեսվող գործունեության կազմակերպումն իրականացվելու է բնապահպանության բնագավառում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններով և ՀՀ օրենսդրության (օրենքների և ենթօրենսդրական ակտերի) այն պահանջներով, որոնք առնչվում են շրջակա միջավայրի պահպանության և մասնավորապես նախատեսվող գործունեության կարգավորման հետ: Դրանցից հիմնականներն են՝

1. ՀՀ Հողային օրենսգիրք (02.5.2001թ.),
2. ՀՀ Ջրային օրենսգիրք (04.6.2002թ.),
3. <<Թափոնների մասին>> ՀՀ օրենք (24.11.2004 թ.),
4. <<Վարչական իրավախախտումների մասին>> ՀՀ օրենք (07.02.2012թ.),
5. <<Մթնոլորտային օդի պահպանության մասին>> ՀՀ օրենք (01.11.1994թ.),
6. <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենք (21.06.2014թ),
7. <<Բնապահպանական վերահսկողության մասին>> ՀՀ օրենք (11.04.2005թ),
8. << Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենք (30.05.2001թ),
9. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 6 մայիսի 2002թ. N 138 հրաման “Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում” N2 – III – 11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին”
10. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 25 հունվարի 2010թ. N 01-Ն հրաման “Հողի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ N 2.1.7.003-10 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին”
11. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 17 մայիսի 2006 թվականի N 533-Ն հրաման “Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) հիգիենիկ նորմերը ՀՆN 2.2.4-009-06 հաստատելու մասին”
12. <<Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքով փոխադրման համար արգելված եվ սահմանափակումների ենթակա ապրանքների ցանկերը հաստատելու, լիազոր մարմիններ սահմանելու եվ ապրանքների արտահանման եվ (կամ) ներմուծման

լիցենզիաների ու թույլտվությունների տրամադրման շրջանակային կարգը հաստատելու մասին»>> ՀՀ կառավարության 25.12. 2014 թ-ի N 1524-Ն որոշում,

13. <<Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքով փոխադրման համար արգելված եվ սահմանափակումների ենթակա որոշ ապրանքների ցանկերը, ապրանքների արտահանման եվ ներմուծման լիցենզիայի եվ հայտի ձեւերը հաստատելու, որոշ ապրանքների արտահանման եվ ներմուծման լիցենզիաների տրամադրման առանձնահատկությունները սահմանելու եվ Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մարտի 15-ի N 327-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»>> 05.02.2015 թ-ի N 90-Ն որոշում,

14. ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» N 121-Ն որոշում,

15. ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թվականի դեկտեմբերի 25-ի «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկը հաստատելու մասին» N 430-Ն հրաման:

16. ՀՀ կառավարության 02.11.2017թ-ի N1404-Ն որոշումը:

17. <<Բնության հատուկ պահպանվող տարածքների>> օրենքը,

18. ՀՀ կառավարության 2014թ հուլիսի 31-ի 781-Ն որոշում,

19. ՀՀ կառավարության 2010թ 71-Ն որոշում,

20. ՀՀ կառավարության 2010թ 72-Ն որոշում,

21. ՀՀ կառավարության 14,08,2009թ 967-Ն որոշում,

22. ՀՀ կառավարության 08.02.2018թ 108-Ն որոշումը:

23. Բուսական աշխարհի մասին ՀՀ օրենքը 23,11,1999թ,

24. Կենդանական աշխարհի մասին ՀՀ օրենքը 03,04,2000թ:

**1.4 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)**

**1.4.1. Նախատեսվող գործունեության նկարագիր**

Շինարարության կազմակերպման նախագիծը մշակված է պատվիրատու Բոգոյան ՍՊԸ-ի պատվերի, անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման 19072024-0050 վկայականի, ՀՀ Լոռու մարզի, Տաշիր համայնքի ղեկավարի կողմից տրված 25.06.2024թ. N 28 ճարտարապետահատակագծային առաջադրանքի, ճարտարապետական եվ կոնստրուկտորական գծագրերի հիման վրա: Պատվիրատուին սեփականության իրավունքով պատկանող 15.5373հա մակերեսով տարածքը/ծածկագիր՝ 06-074-0251-0124/ գտնվում է արդյունաբերության, ընդերքօգտագործման եվ այլ արտադրական, գործառնական նշանակության գոտում՝ համաձայն ՀՀ-ում գործող շինարարական և հակահրդեհային նորմաների:

Շինությունը նախատեսվում է կառուցել ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գ. Մեծավան Դաշտամիջյան փողոց 1 պարիսպ հասցեում նախագծով նախատեսվում է իրականացնել ծածկարանների կառուցում:

Արտաքին կոմունիկացիաների և ճանապարհների մասով նախագիծն ենթարկված է ընդհանուր կառուցապատման նախագծին:

Աշխատանքային նախագծի մշակման համար հիմք է հանդիսացել անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 19072024-0050 վկայականը, պատվիրատուի առաջադրանքը և ՀՀ Տաշիր համայնքի ղեկավարի կողմից 25.06.2024թ. N 28 ճարտարապետահատակագծային առաջադրանքը:

Նախատեսվում է 2 ծածկարանների կառուցում՝

Ծածկարան 1՝

Կառույցն իրենց ներկայացնում է տարածական առանց շրջանակի սառը ձևավորված ցանկապատ 1,1մմ հաստության պրոֆիլով կամարակապ 126,6\*19,9մ արտաքին չափերով կառույց, որի հիմքերն իրականացվելու են

խամքարեբետոնից, պատերը՝ բետոնե 1մ բարձրության, կրող միջնասյուներով  
և սեյսմիկ գոտով: Հատակար կլինի տոփանած գրունտ, խճային շերտով:

Ծածկարան 2՝

Կառույցն իրենց ներկայացնում է տարածական առանց շրջանակի սառը  
ձևավորված ցանկապատ 1,1մմ հաստության պրոֆիլով կամարակապ  
140,3\*16,5մ արտաքին չափերով կառույց, որի տեղադրվելու է գոյություն  
ունեցող ծածկերի արանքում, որոնց միջև հեռավորությունը կազմում է 16,5մ:

խամքարեբետոնից, պատերը՝ բետոնե 1մ բարձրության, կրող միջնասյուներով  
և սեյսմիկ գոտով: Հատակար կլինի տոփանած գրունտ, խճային շերտով:

Կամարածն թիթեղները տեղդրելուն զուգընթաց տեղադրվելու է նաև կառույցի  
տարածական կոշտությունն ապահովող պողպատե էլեմենտներից  
դիաֆրագմաներ:

Հատակը կլինի 15 սմ բետոնե:

Բետոնը կբերվի պատրաստի պայմանագրային հոիմունքներով, տեղում բետոնի  
պատրաստում չի նախատեսվում:

Տարածքի ռելիեֆը այնպիսին է, որ անձրևաջրերը ինքնահոս եղանակով լցվում են հարակից  
սելավատարը:

Նախագծային աշխատանքներն իրականացվում են համաձայն  
ճարտարապետահատակագծային առաջադրանքի, համապատասխանում են գործող  
շինարարական և նախագծային նորմերին և կանոններին, հաշվի են առնված շրջակա  
միջավայրի վրա ազդեցության գործոնները:

Շինության տեղակապումը ընտրված են համաձայն գործող քաղաքաշինական և  
անվտանգության նորմերի, հաշվի առնելով հարակից շինությունների հարկայնությունները և  
հեռավորությունները վերջինից:


Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը  
կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումն իրականացվելու է համաձայն

բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի՝ քաղաքապետարանի հետ համաձայնեցված, տարածաշրջանին բնորոշ ծառերի և թփերի օգտագործմամբ: Օգտագործվելու է տարածքի առկա հողային ռեսուրսները, նոր բուսահող չի բերվելու:

Նախատեսվող գործունեության աշխատանքային նախագծերի մշակման ընթացքում ՀՀ-ում գործող նորմերին համապատասխան նախատեսվելու են անհրաժեշտ միջոցառումներ:

Մույն նախագծում բոլոր տեխնիկական միջոցառումները մշակված են ՀՀ տարածքում գործող բնապահպանական, սանիտարահիգիենիկ, հակահրդեհային և այլ նորմերին համապատասխան:


ՉԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ1:500



Ստորև ներկայացվում կտորոհիսատները՝

Ստորև ներկայացվում է ծածկարան 1-ի հատակագիծը՝


ՀԱՏԱԿԱԳԻԾ 0.00 ՆԻՇՈՒՄ 1:300




ՄԱՍՆԱԳԻՐ  
1. ԾԱԾԿԱՐԱՆ 2418.06 թ.մ

ՀՀ ԼՈՒՈՒ ՄԱՐԶ ՏԱՇԻՐ ՀԱՍՄԱՆԶ Գ. ՄԵԾԱԿԱՆ ԴԱՇՏԱՄԻՋՅԱՆ Փ. 1 ՀՈՂ ՀԱՍՑԵՈՒՄ ԾԱԾԿԱՐԱՆ 1-Ի ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ			00/18/24		
ՏՆՕՐԵՆ	Գ. ԱՎԴԱԼՅԱՆ		ՓՈՒՒ	ԹԵՐԹ	ԹԵՐԹԵՐ
Ն.Գ.Ճ.	Գ. ԱՎԴԱԼՅԱՆ		ԱՆ	Ճ-03	
ԳԾԵՑ	Գ. ԱՎԴԱԼՅԱՆ		ՀԱՏԱԿԱԳԻԾ 0.00 ՆԻՇՈՒՄ		«ՄԱԳ-ԷՆԿՏՈՂՆ» ՍՊԸ ԼԻՑ. No -10777


ՃԱԿԱՏ 1-2 Մ 1:300



ՃԱԿԱՏ Բ-Ա Մ 1:200




ՍԱՌԸ ԶԱՆԿՈՐԿԱԾ  
ԴՐՈՖԻԼ 1.1 մմ P-110R-9,75 մ




ՀՀ ԼՈՒՈՒՄ ՄԱՐԶ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆԷ Պ. ՄԵՏԱԿԱՆ ԴԱՇՏԱՄԻՅՅԱՆ Փ. 1 ՀՈՂ ՀԱՍՑԵՈՒՄ ԾԱՅԿԱՐԱՆ 1-ի ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ			00/18/24		
ՏՆՕՐԵՆ	Պ. ԱԿՂԱՆՅԱՆ		ՓՈՒԼ	ԹԵՐԹ	ԹԵՐԹԵՐ
Ն.Պ.Ճ.	Պ. ԱԿՂԱՆՅԱՆ		ԱՆ	Ճ-04	
ՊԾԵՑ	Պ. ԱԿՂԱՆՅԱՆ				
		ՃԱԿԱՏ 1-2, Բ-Ա	«ՄԱԳ-ԷԼԵԿՏՐՈՆ» ՍՊԸ ԼիՑ. No -10777		

ՃԱԿԱՏ 2-1 Մ 1:300




ՃԱԿԱՏ Ա-Բ Մ 1:200




ԿՈՄՔԵԼԱՍՏՈՐ K-1  
ԹՅՈՒՆ ՏՐԱՎԱՐԱՑ ԺՆՈՒՄ ԺՆՈՒՄ ԺՆՈՒՄ  
ՉԱՄ ք. 300  
ՍԱՌԸ ՉԱՎԱԿՈՐԱԿԱՆ  
ԳՐԱՅԻՆ P-110R-0,75 Մ

ՀՀ ԼՈՒՈՒՒ ՍԱՌԸ ՏԱՇԻՐ ՀԱՍՆՅՆՔ զ. ՍԵՏԱԿԱՆ ԴԱՇՏԱՍԻՑՑԱՆ Փ. 1 ՀՈՐ ՀԱՍՏԵՐԻՄ ԾԱԾԿԱՐԱՆ 1-Ի ԿԱՌՈՒՑՄԱՆ ԼԱՆԱԳԻԾ			00/18/24		
ՏՆՕՐԵՆ	զ. ԱԿՂԱՆՑԱՆ		ՓՈՒԼ	ԹԵՐԹ	ԹԵՐԹԵՐ
Ն.Գ.Ճ.	զ. ԱԿՂԱՆՑԱՆ		ԱՆ	Ճ-05	
ԳԾԵՑ	զ. ԱԿՂԱՆՑԱՆ		ՃԱԿԱՏ 2-1, Ա-Բ		«ՄԱԳ-ԷՆԿՏՐՈՆ» ՍՊԸ ԼԻՑ. No -10777

Ստորև ներկայացվում է ծածկարան 1-ի հիմքի հատակագիծը՝




**Ստորև ներկայացվում է տանիքի ծածկի ջրահեռացման հատակագիծը՝**



**Ծածկարան 2**

ՀԱՏԱԿԱԳԻԾ 0.00 ՆԻՇՈՒՄ ԿԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԻՑ ԳԵՏՈ Մ1:300




ՍԱՍՆԱԳԻՐ  
1. ՇՆԿԱՐԱՆ 2310 ք.մ

ՀՀ ԼՈՒՐԻ ՍՈՒՑ ՏՈՒՐ ԿԱՍՏԱՆԻ Գ. ՍԵՏԱԿԱՆ ԴԱՇՏԱՒՈՋՅԱՆ Վ. 1 ՀՈՂ. ՀԱՍՏԵՈՒՄ ՇՆԿԱՐԱՆ 2-Ի ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ			00/18/24	
ՏՆՕՐԵՆ	Գ. ՍԿՂԱՅԱՆ		ՓՈՒԻ	ԹԵՂԹ
Ն.Գ.Ճ.	Գ. ՍԿՂԱՅԱՆ		ԱՆ	Ծ-01
ԳՐԵՑ	Գ. ՍԿՂԱՅԱՆ	ՀԱՏԱԿԱԳԻԾ 0.00 ՆԻՇՈՒՄ ԿԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԻՑ ԱՌԱՅ	«ՍԱԳ-ԻՆՎԵՍՏՐՈՆ» ՍՊԸ ԼԻՑ. No -10777	

ՀԱՏԱԿԱԳԻԾ 3.20 ՆԻՇՈՒՄ Մ1:300


3.20




ՀՀ ԼՈՒՐԻՄ ՍՈՐՑ ՏՆԵՐԻ ՀԱՄԱՅՆՔ գ. ՍԵՅՍԱՎԱՆ ԴԱՇՏԱՍԻՑՑԱՆ Ա. Ի. ՀՈՒ. ՀԱՍՏԵՈՒՄ ՇԱՏԱԿԱՐԱՆ 2-ի ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ			00/18/24	
ՏՆՕՐԵՆ	գ. ԱՎԿԱՅԱՆ		ՓՈՒԹ	ԹԵՐԹ
Ն. գ. ձ.	գ. ԱՎԿԱՅԱՆ		ԱՆ	Ճ-02
գժԵՑ	գ. ԱՎԿԱՅԱՆ	ՀԱՏԱԿԱԳԻԾ 3.20 ՆԻՇՈՒՄ	«ՄԱԳ-ԷՆԵՎՏՐՈՆ» ՍՊԸ ԼԻՑ. № -10777	

Ծածկարան 2-ի ճակատ`

ՃԱԿԱՏ <<1-26>> ԱՌԱՆՑՔՈՎ Մ1:300





ՃԱԿԱՏ <<26-1>> ԱՌԱՆՑՔՈՎ Մ1:100





ԻՆՏԵՐՆԱԿԱՆ ՏՆՈՒՐ ԳՆԱՀԱՆՈՒՄ Գ. ԱՆՏԵՎԱՆ		00/18/24	
ԴԱՇՏԱՌՈՒՄ Ա. ԴՈՂ. ԳԱՍՅԵՌՈՒՄ ԳՆԱԿԱՐԱՆ 2-Ի ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՆՅԱԳԻՑ		ՓՈՒՆ	ԹԵՐԹ ԹԵՐԹԵՐ
ՏՆՈՒՆ	Գ. ԱՎԿՂԱՆՅԱՆ	ԱՆ	Ե-03
Ն.Գ.Ճ.	Գ. ԱՎԿՂԱՆՅԱՆ		
ԳԾԵՑ	Գ. ԱՎԿՂԱՆՅԱՆ	ՃԱԿԱՏ <<1-26>> <<26-1>> ԱՌԱՆՑՔՈՎ	«ԱՍՈՑ-ԷՆԵՎՏՐՈՆ» ԱՊՈՒ ԼԻՑ. No-10777

ՃԱԿԱՏ <<Ա-Դ>> ԱՌԱՆՑՔՈՎ Մ1:300




ՃԱԿԱՏ <<Դ-Ա>> ԱՌԱՆՑՔՈՎ Մ1:200





ՀՀ ԼՈՒՐԻՒ ՄԱԿԻ ՏՈՒՐ ԳՈՍՏՐԱԸ Գ. ՍԵՅՏԱՆ ԴԱՇՏԱՌՑՄԱՆ Ա. 1 ԴՈՒ. ԿԱՄՑՈՒՄ ՍՏՆՎԱՐԱՆ 2-Ի ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՌԱՆՑՔԻՑ			00/18/24	
ՏՆՕՐԵՆ	Գ. ԱՎԴԱՅԱՆ		ՓՈՒՆ	ԹԵՐԻՑ
Ն. Գ. Ը.	Գ. ԱՎԴԱՅԱՆ		ԱՆ	Ճ-04
ԳՐԵՑ	Գ. ԱՎԴԱՅԱՆ	ՃԱԿԱՏ <<Ա-Գ>>, <<Գ-Ա>> ԱՌԱՆՑՔՈՎ	«ՍԱԳ-ԷՆԵԿՏՐՈՆ» ՍՊԸ ԼՊՑ. No -10777	

ԿՈՆՏՐՈՅԱԼ ԴԻԱՃՐԱԳՄԱՆՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ1:300



ՀԱՆԳՈՒՅՑ - 3 Մ 1:25

ՀԱՏՈՒՅՑ 1-1 Մ 1:25




ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

1. ԿԱՍՏՐԱՑԱԿ ԹԵՐԱՍԱՆԿԱՄ ԶՈՒՐԿԱԾՍ ԾԵՐԱՍԱՆԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԻ ՏԱՐԱԾԱԿԱՆ ԿՈՆՏՐՈՅՈՒՄԸ ԱՊՐԱՅԻՆՈՂ ԳՐԱՅԵՆ ԷԼԵՄԵՆՏՆԵՐԻՑ ԴԻԱՃՐԱԳՄԱՆՆԵՐ:
2. ԴԻԱՃՐԱԳՄԱՆՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ԱՊՐԱՅԵՆ ՀԵՏ ԳՐԱՅԵՆ ԹԻԹԵՐԻՑ ԱՊՐԱՅԻՆՈՂ ԵՆԱԿԵԿԱԾ ԶՈՒՐԳ ԱՆԿՈՒՄԱԿՆԵՐԻՑ՝ 63x63x5 ՍՄ ՀԱՏԱԿԱԾՈՂ:
3. ԴԻԱՃՐԱԳՄԱՆՆԵՐ ԴԱՏՐԱՍՆԵԼ ԵՆԱԿՑՑԱՍՏՐ, ԱՏՈՐԻՆ 3.0Մ ԵՐԿԱՐՈՒԹՅԱՄԸ ՀԵՆԵՈՎ ԱՆ 4.8Մ ԵՐԿԱՐՈՒԹՅԱՄԸ ԹԵՑԱՆՆԵՐՈՎ և ՎԵՐԻՆ ՈՒՐԱՐԱՀԱՅՈՑ ԵՆԱԿՑՈՒՄԱՆ ՖԵՐՄԱՆՆԵՐՈՎ:
4. ԹԵՐԱԿ ԴԻՏԱՐԿԵԼ Թ-07 - Ի ՀԵՏ ՀԱՏԱՅԵՂ

ԳՐԱՅԵՆ ՍՄԻՑ ԵՆԻՍՏՐՈՒՄ ԿՈՆՏՐՈՅՈՒՄ ԴԱՏՐԱՍՆԵՐ ԿՈՆՏՐՈՅՈՒՄ ԵՆԱԿԵԿԱԾ ԶՈՒՐԳ ԱՆԿՈՒՄԱԿՆԵՐԻՑ			00/18/24	
ՏՆՈՒՄԸ	Գ. ԱՎՐԱՄՅԱՆ		ՓՈՒՄ	ԹԵՐԱԿ
Ն.Գ.Ճ.	Գ. ԱՎՐԱՄՅԱՆ		ԱՆ	Ծ-06
ԳՐԵՑ	Գ. ԱՎՐԱՄՅԱՆ	ԿՈՆՏՐՈՅՈՒՄ ԴԻԱՃՐԱԳՄԱՆ	«ԱՍԳ-ԷՆԿՑՈՒՄ» ՍՊԸ ԼՈՑ. ՈՑ -10777	

Ծածկարան 2-ի տանիքի ջրահեռացման հատակագիծ՝



Մտորն ներկայացվում է իրավիճակային հատակագիծը՝



Մոտակա ջրային ռեսուրսը Տաշիր գետն է, որից հայցվող տարածքի հեռավորությունը կազմում է 195մ, ստորև ներկայացվում է իրավիճակային հատակագիծը՝



**Էներգախնայողության և Էներգաարդյունավետության հետ կապված միջոցառումներ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԶԱՆՑԵՐ» ՓԲԸ  
«ԳԵԲԵԴ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ  
«ՏԱՇԻՐ» ՑԱՆՑ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ  
ЗАО «ЭЛЕКТРОСЕТИ АРМЕНИИ»  
ФИЛИАЛ «ДЕБЕД»  
СЕТЬ «ТАШИР»

«ELECTRIC NETWORKS OF ARMENIA» CJSC «DEBED» BRANCH NETWORK «TASHIR»

Տաշիր, Գետափնյա 6

Ташир, Набережная 6

N 52

« 26 » 08 20 24թ.

**ՏԵՂԵԿԱԼՔ**

Տրվում է առ այն, որ «ԲՈԶՈՅԱՆ» ՍՊԸ-ի (քարտ համար 0359770, գ. Մեծավան, Դաշտամիջյան փող. ,1) էլեկտրամատակարարումը իրականացվում «ՄԵԾԱՎԱՆ» 35/10կվ ենթակայանի «ԿՌՄ-ՄԵԾԱՎԱՆ» 10կվ ՕԳ-ի թիվ 41 խարսխային հենարանից համաձայն 06.05.2022թ. տրված ՏՊ410/1-6(10)/0187 տեխնիկական պայմանների :

Տեղեկանքը տրվում է ներկայացնել ըստ պահանջի :

«Տաշիր» ցանցի պետ՝

 Կ. Մուրխասյան

Կառույցի էլեկտրամատակարարումը իրականացվում է Մեծավան -35/10 Կվ ենթակայանի ԿՌՄ-ՄԵԾԱՎԱՆ 10կվ ՕԳ-ի թիվ 41 խարսխային հենարանից համաձայն 06,05,2022թ տրված ՏՊ 410/1-6 (10)/0187 տեխնիկական պայմանների:

Կառույցի էլ. լուսավորության նպատակով նախատեսված են վահաններ համապատասխան քանակի միաբևեռ ավտոմատ անջատիչներով և պաշտպանիչ

անջատման սարքերով:

Լույսի աղբյուր են հանդիսանում LED լամպերով լուսատուները:

Նախագիծը իրաանացված է համապատասխան գործող նորմերի և կանոնների:

**Ջրամատակարարման համակարգ**



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԳԻ ՏԱՇԻՐԻ  
ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ**

Հայաստանի Հանրապետության Լոռիի մարզի Տաշիր համայնք,  
ք. Տաշիր, Վ. Սարգսյան 94, Հեռ. (0254) 2-22-41, tashir.lori@mta.gov.am

**N 4670**

13 սեպտեմբեր 2024 թ.

**ՏԵՂԵԿԱԼՔ**

Տրվում է «Բողոյան» ՍՊԸ-ին առ այն, որ 06-074-0251-0124 կադաստրային ծածկագրով, արտադրական նշանակության հողամասի վրա ծածկարան կառուցելու համար ջուրը տրամադրվելու է «Հովդարա-Մեծավան» ջրագծից:

Տրվում է ներկայացնելու ըստ պահանջի

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

**Է. Արշակյան**



Կարգ. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՕԳՆԱԿԱՆ՝ Ածելյա Մարտիրոսյան  
աշխ հեռ. - 37425422168 քջջ - 37425422104

Ջրամատակարարումն իրականացվելու է Հովդարա-Մեծավան ջրագծից:

Տաշիր համայնքում Վեոլիա Ջուրը սպասարկում է Տաշիր քաղաքին և Սարատովկա բնակավայրին, մնացած բնակավայրերում ջրամատակարարումն իրականացվում է Հովդարա-Մեծավան ջրագծից, որի սպասարկումը և կառավարումը պատկանում է Տաշիր խոշորացված համայնքին: Համայնքը ձեռնարկել է Ջրօգտագործման թույլտվության ստացման գործընթաց և այն կիրականացնի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Համայնքը տրամադրել է

համապատասխան տեղեկանք, իսկ Ջրօգտագործման թույլտվության ստացման գործընթացը համայնքի գործառույթն է:

ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N967-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ տարածքի բնության հուշարձանների ցանկը:

ՀՀ Լոռու մարզում հաշվառված են հետևյալ բնության հուշարձանները՝

Հ/Հ	Անվանումը	Տեղադիրքը
1	«Բազալտանման ապարների (Դիաբազների) գոլավոր դայք»	Ալավերդի քաղաքային համայնք, Լավար գետի միջին հոսանք, կիրճի աջ ափին՝ Դարկ լեռնագագաթի հարավ-արևելյան ստորոտին, Ալավերդի «Լենհանքեր» ավտոճանապարհից մոտ 300 մ դեպի արևմուտք, Մադան գյուղի արևմտյան ծայրամասից մոտ 500 մ դեպի արևմուտք
2	«Գետնանձավ» անձավային թունել	Լոռի Բերդ գյուղից 2 կմ հվ-արլ, Ջորագետի ձախ ափին, հունից 40 մ բարձրության վրա
3	«Ջորագետի հրային ներժայթուկ»	Ջորագետ և Փամբակ գետերի հատման կետում, Ալավերդի-Վանաձոր ավտոմայրուղու աջ կողմում՝ մոտ 10 մ չհասած առաջին թունելի մուտք
4	«Տրավերտիններ դոլերիտային բազալտներում»	Մարց գյուղի խաչմերուկից մոտ 50 մ վերև, Մարց-Աթան գրունտային ավտոճանապարհի ձախ կողմում
5	«Թռչկան» ջրվեժ	Մեծ Պատնի գյուղական համայնք, Չիչխան գետի աջակողմյան Թռչկան վտակի վրա
6	«Դսեղի Ծովեր» լիճ	Դսեղ գյուղից 3 կմ արևելք-հարավ-արևելք, Սևորդաց լեռնաշղթայի Ծովիղաշ լեռնագագաթի հյուսիսային լանջի ափսեաձև գոգավորությունում
7	«Շամլուղի լճակ»	Շամլուղ գյուղական համայնք
8	«Օձի պորտ»	Արդվի գյուղական համայնքի արևելյան մասում, Հովնան Օձունեցու կաթողիկոսի մատուռից 120 մ հյուսիս-արևմուտք
9	«Քոշաքարի մրտավարդ»	Մարգահովիտ գյուղական համայնքի հյուսիսային սահմանագծից մոտ 1 կմ հեռավորության վրա, Գուգարքի անտառտնտեսության Եղեգնուտի անտառպետության բարձրադիր գոտում

Հայցվող տարածքում բնության հուշարձաններ հաշվառված չեն: ՀՀ Լոռու մարզի բնության հուշարձաններից տարածքին ամենամոտը գտնվում է տեղամասից մոտ 18,5կմ հեռավորության վրա:

Այս հողվածը ներկայացնում է Լոռու մարզի Մեծավան գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որը 2002 թ. հաստատվել է Հայաստանի կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 17 հուշարձան (5 միավոր):

հուշարձան	կառուցված	վայր, հասցե
Ամրոց	Ք.ա. 2-1 հզ	գյուղից 1 կմ ան
Գյուղատեղի «Խարաբեք»	միջնադար	գյուղից 5 կմ հս
Գերեզմանոց	միջնադար	
Տապանաքար Մանգասարի	1661 թ.	
Եկեղեցի	վաղ միջնադար	գյուղատեղիում
Թևավոր խաչ	միջնադար	գյուղատեղիի հս եզրին, հայ-վրացական սահմանի մոտ
Եկեղեցի «Պողոս-Պետրոս»	5-6 դդ.	նախորդից ոչ հեռու
Դամբարանադաշտ	Ք.ա. 2-1 հզ	գյուղից 5 կմ հս, «Խարաբեք» վայրում
Մենհիր	Ք. ա. 2-1 հզ	դամբարանադաշտի տարածքում
Եկեղեցի Սբ. Հովհաննես	13 դ.	գյուղի կենտր. մասում
Գերեզմանոց		եկեղեցու շուրջ
Տապանաքար Մխիթար վարդապետի	1853 թ.	եկեղեցու հվ-ան կողմում
Սրահ	19 դ.	կից է եկեղեցուն ամ-ից
Եկեղեցի Սբ. Գևորգ	ուշ միջնադար	գյուղի կենտր. մասում, Սբ. Հովհաննեսից ոչ հեռու
Գերեզմանոց		եկեղեցու մոտ
Մատուռ	20 դ. սկզբ	թևավոր խաչից քիչ հեռու
Մատուռ «Կոկո-Բոգո»	20 դ. սկզբ	գյուղից 1 կմ հս, դաշտ տանող ճանապարհի ձախ եզրին

Հայցվող տարածքում պատմության հուշարձաններ հաշվառված չեն: ՀՀ Լոռու մարզի պատմության հուշարձաններից տարածքին ամենամոտը գտնվում է տեղամասից մոտ 5կմ հեռավորության վրա:

### Շինարարական մոնտաժային աշխատանքների իրականացման ժամանակացույց

Շինարարության նորմատիվ տևողությունը որոշվել է համաձայն (N596-Ն19.03.2015թ. ՀՀ Կառավարության որոշում կետ 111, 113) ՄՆԻՊ 1.04.03-85\* մաս II, հետև հիման վրա հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրը, ընդհանուր մակերեսը: Օբյեկտի ընդհանուր կոմպլեքսի շինարարության նորմատիվ տևողությունը ծրագրվում է 6 ամիս շինարարական աշխատանքների կատարման

համար թույլատրման տրամադրման օրվանից:

## **- Նախատեսվող աշխատանքների կազմակերպում**

Նախատեսել անվտանգությունը և կողմնակի անձանց մուտքը արգելող նշանների տեղադրում:

Հետիոտների անվտանգությունը ապահովելու նպատակով շինհրապարակը անհրաժեշտ է ցանկապատել թիթեղով և ցանկապատի երկայնքով տեղադրել լուսավորություն:

Հողային աշխատանքների իրականացման ընթացքում պայթեցման աշխատանքներ չեն նախատեսվում:

## **- Առաջարկություններ օբյեկտի շինարարության կազմակերպման վերաբերյալ**

Շինարարության կազմակերպման նախագիծը մշակված է պատվիրատու Բոզոյան ՍՊԸ-ի պատվերի, անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման 19072024-06-0050 վկայականի, ՀՀ Լոռու մարզի, Տաշիր համայնքի ղեկավարի կողմից տրված 25.06.2024թ. N 28 ճարտարապետահատակագծային առաջադրանքի, ճարտարապետական եվ կոնստրուկտորական գծագրերի հիման վրա: Ծածկարանները նախատեսվում է կառուցել ՀՀ Լոռու մարզի, Տաշիր համայնքի գ. Մեծավան Դաշտամիջյան փողոց 1 պարիսպ հասցեում: Պատվիրատուին սեփականության իրավունքով պատկանող 15.5373հա մակերեսով տարածքը գտնվում է արդյունաբերության, ընդերքօգտագործման եվ այլ արտադրական, գործառնական նշանակության գոտում: Կազմակերպչա-տեխնոլոգիական սխեմաներ բոլոր տիպի շինմոնտաժային աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական նորմերը, կանոնները, ստանդարտներն ու նախագծի տեխնիկական պայմանները: օբյեկտի շինարարությունը ըստ ԿՈՒՍՍ 3.01.01-85-ի (շինարարության կազմակերպման)

1. Նախապատրաստական փուլ

2. Հողային աշխատանքներ եվ հիմքերի իրականացում

3. Հիմնական փուլ

1. Նախապատրաստական փուլում իրականացվում են հետևյալ աշխատանքները

.. գեոդեզիական նշահարում

. շինհրապարակի ցանկապատում

Շինարարության կենսապահովման ցանցերի տեղադրման աշխատանքները իրականացնել համաձայն շահագործող կազմակերպությունների կողմից տրված տեխնիկական պայմանների: Շինհրապարակը համալրվում է հակահրդեհային սարքավորումներով, լուսարձակներով: Շինարարական աշխատանքները իրականացնել կապալառուի կողմից աշխատանքների

կատարման նախագիծը կազմելուց հետո, որտեղ ըստ ՇՆՊ 111-4-80-ի պահանջների պետք է նշվեն անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանման ցուցմունքները նշված պայմաններում աշխատելու ժամանակ: շինարարության տնտեսությունը հաշվարկված է համաձայն ՇՆՊ 111.04.03-85-ի եվ կազմում է 6 ամիս: շինարարական աշխատանքների ժամկետները եվ հերթականությունը տրված են ժամանակացույցում:

Հողային եվ հիմքերի պատրաստման աշխատանքներ հողային և հիմքերի պատրաստման աշխատանքները կատարել համաձայն աշխատանքային նախագծի և ՇՆՊ 111-4-80 «հողային շինվածքներ եվ հիմքեր»-ի: Հիմքերի փոստրակի մշակման համար առաջարկվում է հետ-բահ 0.5մ<sup>3</sup> ծավալի շերտփավոր պնևմոնիվային մակնիշի էքսկավատոր: Ժապավենային հիմքերի իրականացնելուց հետո նրանց միջև ընկած տարածքներում նախատեսել նաև ձեռքով հետլիցք եվ գրունտի վերջնամշակում:

### **- Առաջարկություններ օբյեկտի շինարարության մատակարարման կազմակերպման վերաբերյալ**

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է շինարարական ինդուստրիայի ձեռնարկություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից: Շաղախը և բետոնը կառաքվեն Տաշիր քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Առաքումը ծրագրվում է այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի աշխատանքների անընդհատությունը:

Առաջարկվում է շինարարության նյութատեխնիկական մատակարարման հետևյալ սխեման.

- Բետոնային խառնուրդը միաձույլ բետոնե կոնստրուկցիաների համար, ինչպես նաև շաղախը շարվածքի համար առաքվում են անմիջապես շինհրապարակ ավտոբետոնախառնիչներով և շաղախատարներով,
  - Հարդարման նյութերը կարող են առաքվել անմիջապես շինհրապարակ:
  - Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումը և լիցքավորումը իրականացվելու է էլ մեքենայացման բազայում:

Շինարարությունը կիրականացվի մասնագիտացված կազմակերպության կողմից :

### **- Կադրային ապահովում և շինտեխնիկա**

Շինարարությունում աշխատողների ընդհանուր թիվը՝ 12 մարդ, որից

Ինժիներատեխնիկական անձնակազմ - 2 մարդ

Հիմնական շինարարական տեխնիկայի պահանջարկը որոշվում է աշխատանքների ծավալների, մեխանիզմների և մեքենաների միջին արտադրողականության և աշխատանքների կատարման ընտրված եղանակների հիման վրա:

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը կիրականացվի շինհրապարակից դուրս Տաշիր քաղաքում գործող լցակայաններում կամ մասնագիտացված սպասարկման կետերում:

## - Նյութերի և բնառեսուրսների օգտագործում

Շինարարական նյութերից օգտագործվելու է թիթեղյա կոնստրուկցիաները, բետոն, խիճ եւ այլն: Բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի խոնավացման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու եւ կենցաղային նպատակների համար:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքերի ընթացքում, կենցաղային աղբն է՝ մոտ 0.66տ /յուրաքանչյուր ամիս մոտ 110կգ /110x6=660կգ/, Շինարարական աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Առաջացած կենցաղային աղբը կտեղափոխվի աղբահավաք ծառայության կողմից:

- a) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W_{\text{է.ա.}} = (n \times N + n_1 \times N_1) \times T, \text{ որտեղ}$$

$n$  – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 2 մարդ

$N$ – ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ<sup>3</sup>օր/մարդ

$n_1$ – սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 10մարդ

$N_1$  – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 խմ.օր/մարդ

$T$  – աշխատանքային օրերի թիվն է՝ 150 օր

$$W_{\text{խ.տ.}} = (2 \times 0.016 + 10 \times 0.025) \times 150 = 79.8 \text{ խմ/շին. ժամ.}:$$

b) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$$U_1 = S_1 \times K_1 \times T, \text{ որտեղ՝}$$

$S_1$  – ջրվող տարածքի մակերեսը, 1000

քմ,  $K_1$  – 1 մ<sup>2</sup> օրական ջրցանի նորմը,

0.0015 խմ,

$T$  – ջրցանի ժամանակահատվածը

օրերով,  $900U_1 = 1000 \times 0.0015 \times 900 = 1350$

խմ/շին. ժամ.:

Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 1429.8 խմ/շին. ժամ:

Կառուցվող օբյեկտի ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի:

Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն տեղադրելով բնօրգուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով:

Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում էլեկտրամատակարարումը կիրականացվի համաձայն տեխնիկական պայմանի:

## 2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ

### 2.1 ՖԻԶԻԿԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Երկրաբանական կառուցվածքը շատ պարզ է. այստեղ զարգացած են միայն վերին պլիոցենի բազալտը, հրաբխային ավազները և ժամանակակից գոյացությունները: Հիմնականում ներկայացված են պլազիոկլազային միկրոլիտներով, որոնք մասամբ կողմնորոշված են տեղանքում: Չկա հրաբխային ապակի, իսկ պլազիոկլասների միջև ընկած տարածություններում զարգանում է անգույն անալցիմ՝ զբաղեցնելով փոքր, բայց հաճախակի տարածքներ:

Հիմնական զանգվածում ներառված են բազմաթիվ, օպատիզացված բազալտացված եղջուրային խափուսիկների փոքրիկ պրզմաներ, լայն տարածում ունեն մագնետիտը, թափանցիկ ապատիտի եզակի բյուրեղիկներ:

Թեք ու անտառագուրկ լանջերը կտրատված են հեղեղատներով ու ոչ խորը գետահովիտներով: Երջանի տարածքի մեծ մասում տեղանքի թեքությունները 8<sup>0</sup>-ից չեն գերազանցում և համեմատաբար մատչելի են տնտեսական յուրացման համար:

Տարածաշրջանը հարուստ է ջրային ռեսուրսներով:

### Տարածքի սեյսմիկ բնութագիրը

Ըստ սեյսմիկ հասկության ՀՀՇՆ II-20.04.2020թ.-ի, տեղագնվող շրջանը գտնվում է II սեյսմիկ գոտում՝ գրունտների  $A_{max} = 0.4g$  արագացմամբ, 9 ավելի բալլ սեյսմիկությամբ: աստիճան, իսկ գրունտները համապատասխանում են սեյսմիկ երկրորդ կարգի գրունտների:

Սեյսմատեկտոնական տեսակետից շրջանը և տարածքը բնութագրվում է տեկտոնական բազմազան ձևերի առկայությամբ, բարդացված խզումային և ծալքավոր «կառույցներով»:


▲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՀԱՎԱՆԱԿԱՆ ՍԵՑՍՄԻԿ ՎՃԱՆԳԻ ԳՈՏԻԱՎՈՐՄԱՆ ՔԱՐՏԵԶ



- ԿԼԻՄԱՆ

Շրջանում ներկայացված են տարբեր կլիմայական տիպեր, որը պայմանավորված է լեռնային կտրտված ռելիեֆով և բացարձակ բարձրությունների զգալի տատանվումներով: Հայցվող տարածաշրջանի կլիման մտնում է չափավոր տաք կլիմայական գոտում, որը բնորոշվում է տաք և խոնավ ամառներով, և չափավոր ցուրտ ձմեռներով: Ստորև բերված է կլիմայական գոտիների տարածման սխեմատիկ քարտեզը: Ստորև աղյուսակներում ամփոփված է տեղեկատվություն օդի ջերմաստիճանի, մթնոլորտային տեղումների և ձնածածկի վերաբերյալ (ըստ մոտակա Տաշիր օդերևութաբանական կայանի տվյալների): Ուսումնասիրվող տարածքի կլիմայական պայմանները բնութագրելիս վկայակոչվել է ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ II-7.01-2011 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը և ներկայացվել է Տաշիր քաղաքի համապատասխան կլիմայական ցուցանիշները, քանի որ Մեծավան բնակավայրինը բացակայում է:

Ստորև աղյուսակի տեսքով բերվում է մի քանի կլիմայական տվյալներ՝ ըստ Տաշիր օդերևութաբանական կայանի դիտարկումների:



**ՀՀՇՆ 22-01-2024 «ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԿԼԻՄԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ**

**ՕԴԻ ՄԻՋԻՆ ԵՎ ԷՔՍՏՐԵՄԱԼ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԸ,  
ՁՄՈԱՆ ՍԿԻՋԲԸ, ՎԵՐՋԸ ԵՎ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ**

Աղյուսակ 1 Օդի միջին ջերմաստիճան

Բնակավայրի անվանումը	Միջին ջերմաստիճանն ըստ ամիսների, °C												Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
27. Տաշիր	-4.6	-3.7	0.0	5.9	10.3	13.7	16.4	16.1	12.4	7.6	2.1	-2.3	6.2	-34.1	34.6

Աղյուսակ 4 Օդի դիտված բացարձակ առավելագույն (ա) և նվազագույն (ն) ջերմաստիճանը

Բնակավայրի անվանումը	ա/ն	ըստ ամիսների, °C												Տարեկան
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
27. Տաշիր	ա	16.0	17.3	23.3	26.1	29.3	30.4	34.6	33.7	32.2	28.4	22.5	19.1	34.6
	ն	-33.6	-31.5	-30.3	-19.4	-7.0	-4.5	0.1	-2.0	-8.2	-15.9	-27.4	-34.1	-34.1

Աղյուսակ 5 Ձմռան սկիզբը, վերջը և տևողությունը

(օդի 0°C ջերմաստիճանի կայուն անցումը գարնանը և աշնանը)

Բնակավայրի անվանումը	Սկիզբ	Վերջ	Տևողություն, օր
1	2	3	4
27. Տաշիր	29 նոյեմբեր	20 մարտ	112

Աղյուսակ 7 Օդի նշված ջերմաստիճաններով օրերի միջին (մ) և առավելագույն (ա) քանակը ցուրտ ժամանակահատվածի համար

Ամիս	Օդի ջերմաստիճանը, °C (նվազագույն ջերմաչափով)									
	≤-15		≤-20		≤-25		≤-30		≤-35	
	մ	ա	մ	ա	մ	ա	մ	ա	մ	ա
	1	2	3	4	5	6	7	8	9	10

Ամիս	1	2	3	4	5	6	7	8	9	10
Տաշիր										
79. Դեկտեմբեր	4.7	18	1.5	7	0.3	3	0.02	2		
80. Հունվար	7.8	25	2.8	22	0.7	10	0.1	3		
81. Փետրվար	6.0	20	2.6	16	0.7	11	0.05	2		

Աղյուսակ 8 Օդի նշված ջերմաստիճաններով օրերի միջին (մ) և առավելագույն (ա) քանակը տաք ժամանակահատվածի համար

Ամիս	Օդի ջերմաստիճանը, °C (առավելագույն ջերմաչափի տվյալներով)							
	≥25		≥30		≥35		≥40	
	մ	ա	մ	ա	մ	ա	մ	ա
	1	2	3	4	5	6	7	8

Տաշիր								
79. Հունիս	1.6	12	0.01	1				
80. Հուլիս	6.0	26	0.2	4				
81. Օգոստոս	8.0	29	0.5	10				

Աղյուսակ 9 Օդի էքստրեմալ ջերմաստիճանների միջին արժեքները (°C)

(առավելագույնի միջինը՝ ա. մ., և նվազագույնի միջինը՝ ն. մ.)

Բնակավայրի անվանումը	ա.մ. / ն.մ.	ըստ ամիսների												Տարեկան
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
27.Տաշիր	ա.մ.	8.6	9.7	14.2	20.2	23.2	25.2	27.4	27.7	26.2	22.8	17.0	11.5	28.8
	ն. մ.	-22.1	-21.1	-17.3	-7.8	-1.8	1.8	4.3	4.0	-0.7	-6.0	-13.0	-19.6	-25.3

ՕՐԻ ՀԱՐԱՔԵՐԱԿԱՆ ԽՈՆԱՎՈՒԹՅՈՒՆԸ

Աղյուսակ 10 Օդի հարաբերական խոնավությունը

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %																	
	ըստ ամիսների													Միջին տարեկան	Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Միջին ամսական		Միջին ամսական, ժամը 15-ին	Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	
27.Տաշիր	70	71	73	73	76	77	77	75	77	76	74	71	74	70	58	77	63	

ՄԹՆՈՒՆՈՒՄԱՅԻՆ ՏԵՂՈՒՄՆԵՐԸ

Աղյուսակ 12 Մթնոլորտային տեղումները

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը _____ միջին ամսական _____ մմ _____ օրական առավելագույն													Տարեկան	Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ	Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ
	ըստ ամիսների															
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր				
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	
27.Տաշիր	22	28	42	76	131	139	81	62	53	49	33	19	735	144	591	
	26	46	33	36	116	88	61	54	35	40	33	29	116			

**ՁՅԱՆ ԾԱԾԿՈՒՅԹ**

Աղյուսակ 14 **Ձյան ծածկույթ** (արդիականացման ենթակա)

Բնակավայրի անվանումը	Ձյան ծածկույթը			
	Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Ձյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ	Գրունտի սառչման առավելագույն խորությունը, սմ
1	2	3	4	5
68. Տաշիր	67	73	150	64

**ՔԱՄԻ**

Աղյուսակ 15 **Քամի** (արդիականացման ենթակա)

Բնակավայրի անվանումը	Ամիսներ	Կրկնելիությունը, %								Մնացորդի կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Գերակշռող ուղղությունը հունիս - օգոստոս ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հովիտին, մ/վ	Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր - փետրվար ամիսներին	Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ
		Միջին արագությունը, մ/վ													
		Հյուսիսային	Հյուսիս-արևելյան	Արևելյան	Հարավ- արևելյան	Հարավային	Հարավ-արևմտյան	Արևմտյան	Հյուսիս-արևմտյան						
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16

34.Տաշիր	հունվար	19	3	2	4	10	32	19	11	38	3.2	ՀսԱրլ	2.4	ՀվԱրմ	5.1
		2.6	2.0	2.2	3.0	4.2	5.1	4.9	3.3						
	ապրիլ	35	10	4	5	8	16	7	15	37	2.1				
		2.7	2.6	2.3	2.5	2.9	4.0	3.4	2.8						
	հուլիս	45	23	5	2	2	2	5	16	46	1.2				
		2.5	2.4	2.4	2.5	2.4	3.0	2.5	2.6						
	հոկտեմբեր	39	7	3	4	6	13	11	17	44	1.5				
		2.6	2.2	2.0	2.1	2.5	3.6	3.2	2.7						

Աղյուսակ 16 Քամու հաշվարկային արագությունը

Բնակավայրի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, (հՊա)	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով ( $\geq 15$ մ/վ)օրերի քանակը	Հաշվարկային արագությունը (մ/վ), որը հնարավոր է մեկ անգամ «ո» տարիների ընթացքում		
				25	50	100
1	2	3	4	5	6	7
27.Տաշիր	849.1	1.9	26	25	27	29

Աղյուսակ 18 Ուժեղ քամիներով օրերի քանակը

Բնակավայրի անվանումը	Ամսական միջին արժեքները, օր												Տարեկան	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	
27.Տաշիր		6.3	4.5	2.9	2.0	0.7	0.3	0.1	0.1	0.2	0.7	2.6	5.5	26

2.3 Օդային ավազան

Հանրապետության տարածքում օդային ավազանի ֆոնային աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ -ի կողմից:

Սակայն Մեծավանի մշտական (ստացիոնար) տարածքում դիտակայաններ կամ պասիվ նմուշառիչներ չեն տեղադրված և մթնոլորտային օդի աղտոտվածության վերաբերյալ տեղեկատվություն կենտրոնի պաշտոնական կայքում ներկայացված չէ:

Որոշակի պատկերացում բնակավայրերի օդային ավազանների աղտոտվածության մասին կարելի է ստանալ հաշվարկային եղանակով: Այդ նպատակով մշակվել է «ՀՀ բնակավայրերի մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաները» ուղեցույց-ձեռնարկը: Ըստ այդ ուղեցույցի մինչև 10 հազար բնակչությամբ բնակավայրերի համար օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն են. փոշի՝ 0.2 մգ/մ<sup>3</sup>, ծծմբի երկօքսիդ՝ 0.02 մգ/մ<sup>3</sup>, ազոտի երկօքսիդ՝ 0.008 մգ/մ<sup>3</sup> և ածխածնի օքսիդ՝ 0.4 մգ/մ<sup>3</sup>:

**ՀՀ ՈՐՈՇ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՄԹՆՈՒՈՐՏԱՅԻՆ ՕԴՆ ԱՂՏՈՏՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ՖՈՆԱՅԻՆ ԿՈՆՑԵՆՏՐԱՑԻԱՆԵՐ (ՀՆԳԱՄՅԱ ՄԻՋԻՆ)**

Քաղաք	Աղտոտող նյութ	Միջին հնգամյա կոնցենտրացիա (Ֆոն), մգ/մ3
Վանաձոր	Ազոտի երկօքսիդ	0.006
	Շծմբի երկօքսիդ	0.006
	Փոշի	0.164


**Ժամանակավոր առաջարկություններ «Վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումները»**

Բնակչության քանակը (հազար մարդ)	Ֆոնային կոնցենտրացիաներ (մգ/մ3)			
	Փոշի	Շծմբի երկօքսիդ (SO2)	Ազոտի երկօքսիդ (NO2)	Ածխածնի օքսիդ (CO)
50 -100	0.098	0.007	0.034	1.3
10-50	0.095	0.006	0.033	1.1
<10	0.071	0.006	0.023	0.8

# Մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտացանց



**ՀՀ մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի արդյունքները / 2022 թվական**



Թշ քաղաքների մթնոլորտի աղտոտվածության ցուցանիշը (ՄԱՑ) 2022թ.

+

<u>Քաղաքը</u>	<u>ՄԱՑ</u>	<u>Լյութերը, որոնցով որոշվել է ՄԱՑ-ը</u>	<u>ՄԱՑ</u>
<u>Երևան</u>	2.15	1. <u>ազոտի երկօքսիդ</u> 0.66	2.15
		2. <u>փոշի</u> 0.98	
		3. <u>ծծմբի երկօքսիդ</u> 0.45	
		4. <u>գետնամերձ օզոն</u> 0.07	
<u>Վանաձոր</u>	1.18	1. <u>ծծմբի երկօքսիդ</u> 0.08	1.18
		2. <u>ազոտի երկօքսիդ</u> 0.08	
		<u>փոշի</u> 1.03	
<u>Այսվերդի</u>	1.01	1. <u>ծծմբի երկօքսիդ</u> 0.15	1.01
		2. <u>ազոտի երկօքսիդ</u> 0.06	
		3. <u>փոշի</u> 0.80	
<u>Հրազդան</u>	1.82	1. <u>ծծմբի երկօքսիդ</u> 0.22	1.82
		2. <u>ազոտի երկօքսիդ</u> 0.33	
		3. <u>փոշի</u> 1.28	
<u>Արարատ</u>	1.82	1. <u>ծծմբի երկօքսիդ</u> 0.97	1.82
		2. <u>ազոտի երկօքսիդ</u> 0.42	
		1. <u>ընդհանուր փոշի</u> 0.43	
<u>Գյումրի</u>	2.26	1. <u>ծծմբի երկօքսիդ</u> 0.61	2.26
		2. <u>ազոտի երկօքսիդ</u> 0.49	
		1. <u>փոշի</u> 1.16	
<u>Կապան</u>	0.58	1. <u>ծծմբի երկօքսիդ</u> 0.43	0.58
		2. <u>ազոտի երկօքսիդ</u> 0.15	
<u>Քաջարան</u>	0.61	1. <u>ծծմբի երկօքսիդ</u> 0.47	0.61
		2. <u>ազոտի երկօքսիդ</u> 0.15	
<u>Չարենգավան</u>	0.81	1. <u>ծծմբի երկօքսիդ</u> 0.52	0.81
		2. <u>ազոտի երկօքսիդ</u> 0.29	

## 2.4 Ջրային ռեսուրսներ

Տարածաշրջանը հարուստ է ջրային ռեսուրսներով: Ջրագրական հիմնական միավորը Ձորագետ գետն է՝ իր Չերնայա, Տաշիր, Ուռուտ, Գյառ-գյառ, Մեծ-ձոր և բազմաթիվ այլ վտակներով: Գետերը պատկանում են Քուրի համակարգին և բնութագրվում են ձնաանձրևային սնումով ու փոփոխական դեբիտով:

Դեբեդի վտակ Ձորագետի երկարությունը 67 կմ է: Սկիզբ է առնում Ջավախքի լեռնաշղթայի լանջերից: Լեռնահարթավայրային տիպի գետ է: Վերին հոսանքում՝ Լոռվա դաշտում, ունի հարթավայրային բնույթ՝ դանդաղահոս է, ցածրադիր, երբեմն ճահճապատ ափերով և հաճախ առաջացնում է գալարներ: Միջին հոսանքում՝ Ստեփանավան քաղաքից ներքև, գետը, ընդունելով Տաշիր խոշոր վտակը, մտնում է խոր, մինչև 100-120մ խորությամբ կիրճերի մեջ: Գետահովիտը նեղանում է՝ վերածվելով կիրճի, այնուհետև նեղ ու խորը կանիոնի: Ձորագետի ջրահավաք ավազնի մակերեսը 1460 կմ<sup>2</sup> է:

Ձորագետի սնումը խառն է. 53.2%-ը կազմում են ձնաանձրևային, իսկ 46.8%-ը՝ ստորերկրյա ջրերը: Ջրերն օգտագործվում են ոռոգման և էլեկտրաէներգիա ստանալու նպատակներով:

Տաշիր գետը Ձորագետի առավել խոշոր վտակն է: Տաշիր գետը սկիզբ է առնում Վիրահայոց լեռնաշղթայի լանջերից, հոսում Լոռվա սարահարթով, թափվելով Ձորագետ՝ գետաբերանից 28 կմ հեռավորության վրա: Վերին հոսանքում Գարգառ վտակնընդունելուց հետո հովիտը լայնանում է, Ձորագետը միանում է Փամբակ գետին և սկզբնավորում Դեբեդ գետը:

Տարածաշրջանում է գտնվում Լոռու խորքային խմելու ջրերի հանքավայրը: Հանքավայրի խոշոր ջրատար հորիզոնը, որը սնվում է Խոնավ լեռներից, ուղղված է դեպի հարավ-արևելք և բեռնաթափվում է Տաշիր և Ձորագետ գետերի հովիտներում: Ջրատար հորիզոնը բեռնաթափվում է աղբյուրների երեք հզոր խմբերով (Նովոսելցևո՝ 505.2 լ/վրկ, Ակսյուտինի՝ 345.5 լ/վրկ, Կիզկալայի (Ախթալա)՝ 653.0 լ/վրկ պաշարներով), որոնք օգտագործվում են ջրամատակարարման նպատակով:

Բացի վերը նշված հիմնական ջրատար հորիզոնից, մակերևույթից 0.5-10 մ խորության վրա տարածված է այլուվիալ-պրոլյուվիալ նստվածքների հետ կապված ջրատար հորիզոն (0.5-25.0 մ հզորությամբ), որի պաշարները կազմում են 24.7 լ/վրկ «B» խմբով: Տարածված է նաև հրաբխային նստվածքների հետ կապված ջրային

հորիզոն՝ 28.8 լ/վրկ (C1-խմբի):

ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի տվյալների՝ Ձորագետ գետի որակը 2-րդ դասին է պատկանում (լավ որակ), իսկ Տաշի գետի ջրերինը՝ 3-4 դասի (միջիկ- անբավարար որակ)՝ պայմանավորված երկաթի, ԿՆ, ԹՔՊ, նիտրատ իոնի, ֆոսֆատ իոնի պարունակությունների գերազանցումներով:

Հայաստանի Հանրապետությունում մակերևութային, այդ թվում նաև Սևանա լճի ջրերի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի 75-Ն որոշման: Գնահատման համակարգը ջրի որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով: Արաքս գետի ջրի որակի գնահատումը դեռևս կատարվում է 1990 թվականին ընդունված մակերևութային ջրերի աղտոտվածության ձկնատնտեսական սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների կիրառմամբ:

Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի արդյունքների համաձայն ՀՀ գետերի ակունքներում և բնակավայրերից վերև ընկած հատվածներում ջրի որակը

«լավ»-ից «անբավարար» որակի է (2-4-րդ դաս): Խոշոր բնակավայրերից և քաղաքներից հետո չմաքրված կոմունալ-կենցաղային կեղտաջրերի՝ գետին խառնվելու արդյունքում դիտվում է աղտոտվածության աճ, և հիմնականում ջրի որակը «միջակից» «վատ» է (3-5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, ֆոսֆատ և նիտրիտ իոններով: Հատկապես աղտոտված է Փամբակ գետը՝ Վանաձոր քաղաքից հետո, Հրազդան գետը՝ Երևան քաղաքից հետո մինչև գետաբերանն ընկած հատվածում, Ախուրյան գետը՝ Գյումրի քաղաքից հետո, Կարկաչուն գետը՝ գետաբերանի հատվածում, Մեծամոր գետը՝ Քասախ գետի խառնվելուց հետո մինչև գետաբերանն ընկած հատվածում, Քասախ գետը՝ Ապարան քաղաքից հետո, Գետառ և Մարմարիկ գետերը՝ գետաբերանի հատվածներում, Վարարակ գետը՝ Գորիս քաղաքից ներքև հատվածում և Երևանյան լիճը:

Տարածաշրջանում է գտնվում Լոռու խորքային խմելու ջրերի հանքավայրը, որի պաշարները /Լոռու Սարահարթի քաղցրահամ ջրերի հանքավայր/ հաստատված են 4


տեղամասերով՝

1. Նովոսելցովայի խմբի աղբյուրների ջրհավաք կառույցներ: Այն հայցվող տարածքից գտնվում է շուրջ 8,5կմ հեռավորության վրա, դեպի հարավ-արևմուտք:
2. Տաշիր հորատանցքի ջրհավաք կառույցներ: Այն հայցվող տարածքից գտնվում է շուրջ 11կմ հեռավորության վրա՝ դեպի հյուսիս-արևմուտք:
1. Աքսուտինի խմբի աղբյուրների ջրհավաք կառույցներ: Այն հայցվող տարածքից գտնվում է շուրջ 8,1կմ հեռավորության վրա՝ դեպի հարավ:
2. Ղզղալայի կամ Գետավանի խմբի աղբյուրների ջրհավաք կառույցներ: Այն հայցվող տարածքից գտնվում է շուրջ 10,6կմ հեռավորության վրա՝ դեպի հարավ-արևելք:


### ՀՀ մակերևութային ջրերի աղտոտվածության գնահատումը

2022 թվականի տվյալների համաձայն ՀՀ գետերի դիտակետերի 10%-ում ջրի որակը գնահատվել է 2-րդ դաս («լավ» որակ), 39%-ում՝ 3-րդ դաս («միջակ» որակ), 18%-ում՝ 4-րդ դաս («անբավարար» որակ) և 33%-ում՝ 5-րդ դաս («վատ» որակ):


ՀՀ գետերի ջրի որակի նկարագիրը 2021-2022 թվականներին



ՀՀ ջրամբարների ջրի որակի նկարագիրը 2022 թվականին (դիտակետերի ընդհանուր թիվ՝ 6)




Գծապատկեր 2. Գետերի և ջրամբարների ջրի որակի նկարագիրը



Պատկեր 3. Գետերի ջրի որակի նկարագիրն ըստ ՋԿՏ-ների, 2022 թ.

ՀՀ մակերևութային ջրերի որակը / 2022 թվական



Աղյուսակ 1. Գետերի ջրի որակը 2022 թվականին

Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային ռեսուրս	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի որակի բնութագրիչ	Ջրի կարգավիճակի դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների	Ջրի կարգավիճակի ընդհանրական դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների
Հյուսիսային	Փամբակ	0.5 կմ գլ. Խնկոյանից վերև (1)	Երկաթ, ալյումին	3-րդ	3-րդ
		0.5 կմ ք. Սպիտակից ներքև (2)	Կալցիում, ՇՍՄ, ՀՀԱ	3-րդ	4-րդ
			Նիտրատ իոն	4-րդ	
		1 կմ ք. Վանաձորից վերև (3)	Նիտրատ իոն, ՀՀԱ, ԿՉՆ	3-րդ	3-րդ
		0.5 կմ ք. Վանաձորից ներքև (4)	Նիտրատ իոն, մոլիբդեն, ՀՀԱ, ԿՉՆ	3-րդ	5-րդ
	Նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, ՀՀԱ, ընդհանուր ֆոսֆոր		4-րդ		
	Ամոնիում իոն		5-րդ		
	Դեբեդ	0.5 կմ Մարցիգետ թափման կետից ներքև (5)	Ամոնիում իոն, մանգան, ԿՉՆ	3-րդ	3-րդ
		0.5 կմ ք. Այրումից վերև (6)	Նիտրատ իոն	3-րդ	4-րդ
			Մոլիբդեն	4-րդ	
		սահմանի մոտ (7)	Երկաթ	3-րդ	4-րդ
	Մոլիբդեն, ԿՉՆ		4-րդ		
	Ջորազետ	0.5 կմ ք. Ստեփանավանից վերև (8)	Կալցիում, վանադիում	3-րդ	4-րդ
			Մանգան	4-րդ	
		Գետաբերան (10)	Մանգան, ԿՉՆ	4-րդ	4-րդ
Տաշիր	0.5 կմ գլ. Միխայելովայից վերև (11)	Ամոնիում իոն, մանգան, երկաթ	3-րդ	3-րդ	
	Տաշիր	0.5 կմ գլ. Մաքատով-կայից ներքև (12)	-	2-րդ	2-րդ

**Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք**

Փամբակ գետի ջրի որակը Խնկոյան գյուղից վերև և Վանաձոր քաղաքից վերև հատվածներում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)։ Խնկոյան գյուղից վերև հատվածում՝ պայմանավորված երկաթով և ալյումինով, Վանաձոր քաղաքից վերև՝ նիտրատ իոնով, ընդհանուր լուծված աղերով և կախությանի չոր նյութերով։ Սպիտակ քաղաքից ներքև հատվածում ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված նիտրատ իոնով։ Վանաձոր քաղաքից ներքև ընկած հատվածում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում իոնով։

Դեբեդ գետի ջրի որակը Մարց գետի թափման կետից ներքև գնահատվել է

«միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում իոնով, մանգանով և կախութային չոր նյութերով: Այրում քաղաքից վերև և սահմանի մոտ հատվածներում ջրի որակը գնահատվել է

«անբավարար» (4-րդ դաս). Այրում քաղաքից վերև հատվածում՝ պայմանավորված մոլիբդենով, սահմանի մոտ՝ մոլիբդենով և կախութային չոր նյութերով:

Ձորագետ գետի ջրի որակը Ստեփանավան քաղաքից վերև և գետաբերանի հատվածներում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս). Ստեփանավան քաղաքից վերև՝ պայմանավորված մանգանով, գետաբերանում՝ մանգանով և կախութային չոր նյութերով:

Տաշիր գետի ջրի որակը Միխայելովկա գյուղից վերև հատվածում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում իոնով, մանգանով և երկաթով: Սարատովկա գյուղից ներքև հատվածում ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս):

Մարց գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «լավ» (2-րդ դաս): Ախթալա գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «վատ» (5-րդ

դաս)՝ պայմանավորված ցինկով, պղնձով, կադմիումով, մանգանով, կոբալտով, անագով, սուլֆատ իոնով և կախութային չոր նյութերով:


Գարգառ գետի ջրի որակը ակունքում գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված մոլիբդենով:

Շնող գետի ջրի որակը գետաբերանում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված մոլիբդենով և սուլֆատ իոնով:

Աղստև գետի ջրի որակը Դիլիջան քաղաքից վերև և ներքև, Իջևան քաղաքից վերև և ներքև հատվածներում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս). Դիլիջան քաղաքից վերև՝ պայմանավորված երկաթով և կախութային չոր նյութերով, Դիլիջան քաղաքից ներքև՝ նաև նիտրիտ իոնով, Իջևան քաղաքից վերև՝ պայմանավորված ամոնիում իոնով, մանգանով, երկաթով, բարիումով և կախութային չոր նյութերով, Իջևան քաղաքից ներքև՝ ամոնիում և նիտրիտ իոններով, երկաթով, բարիումով, ընդհանուր ֆոսֆորով և կախութային չոր նյութերով:

Գետիկ գետի ջրի որակը Վահան գյուղից վերև և գետաբերանի հատվածներում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս). Վահան գյուղից վերև՝ պայմանավորված ամոնիում իոնով, երկաթով և կախութային չոր նյութերով, գետաբերանում՝ ամոնիում իոնով և բարիումով:

**ՀՀ Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը / 2022 թվական**



## - Հողերի նկարագիրը

Տեղամասի շրջանում զարգացած են մարգագետնային սևահողանման, գետահովտադարավանդային հողերը և սևահողերը: Սևահողերում ահողային լուծույթի ռեակցիան գլխավորապես չեզոք է (pH-ը տատանվում է 7-ի սահմաններում): Կլանող համալիրը հագեցված է հիմնականում Ca-ով և Mg-ով:

Մարգագետնատափաստանային սևահողանման հողերը պարունակում են մեծ քանակությամբ հումուս (9-10, մինչև 18%), ունեն լավ արտահայտված հատիկակնձկային ստրուկտուրա, կավավազային մեխանիկական կազմ, հզոր են կամ միջակ հզոր: Այս տիպի հողերը ունեն գլխավորապես կավավազային մեխանիկական կազմ: Կլանման տարողությունը բարձր է, կլանված կատիոններում գերակշռողը Ca-ն է:

Ռեակցիան չեզոք է կամ թույլ հիմնային: Բնութագրվում են բարելավ ֆիզիկական և ջրաֆիզիկական հատկություններով, լավ արտահայտված ստրուկտուրայով: Մարգագետնասևահողային հողերի զարգացումն ընթանում է ստորգետնյա քաղցրահամ ջրերի մշտական ազդեցության պայմաններում, որոնք հիմնականում գտնվում են 1.5-3.0մ խորության վրա: Ստորին հորիզոններում պարզորոշ նկատվում են գլեացման հետքեր և երկաթի օքսիդների զգալի կուտակումներ:

## - Հողային ռեսուրսներ

Հայցվող տարածքի հողերը սևահող կրագերծված կարբոնատազուրկ հողեր են, որտեղ առանձին ծագումնաբանական հորիզոնների քիմիական բաղադրությունը, մասնավորապես սիլիցիումի, ալյումինիումի, երկաթի, կալիումի պարունակության տեսակետից առանձնապես խիստ չի տարբերվում, նկատվում է դրանց հավասարաչափ կուտակում հողի պրոֆիլի սահմաններում:

Հողային լուծույթի ռեակցիան գլխավորապես չեզոք է (pH-ը տատանվում է 7-ի սահմաններում): Կլանող համալիրը հագեցված է հիմնականում Ca-ով և Mg-ով: Բնորոշ է կնձկային ստրուկտուրա: Հարուստ են ընդհանուր ազոտով (0.15-0.35%), ֆոսֆորական թթվով (0.15-0.26%) և կալիումով (1-2%):

Այս հողերի քիմիական ու ֆիզիկաքիմիական հատկությունները հետևյալն են.

Հողատիպը և	Խորությունը,	Հումուսը,	Կլանված	pH-ը ջրային	Հիդրոլիզային
------------	--------------	-----------	---------	-------------	--------------

Էնթատիպը	սմ	%	հիմքերի գումարը, մ/էկվ 100գ հողում	քաշվածքում	թթվությունը, մ/էկվ 100գ հողում
Սևահողանման մարգագետնատա- փաստանային	0-5	18.1	49.3	6.2	4.6
	5-14	10.8	49.4	6.7	8.0
	14-27	7.8	44.7	6.7	7.5
	27-40	5.8	28.6	6.8	4.6
	40-61	2.0	22.7	6.8	2.7
	61-82	0.8	21.5	6.9	1.6
	82-120	0.4	22.0	7.0	1.4

Հայցվող տարածքի հողերն աղտոտված չեն, քանի որ տարածքում այն աղտոտող որևէ գործունեություն չի իրականացվել:

#### - Կենսաբազմազանություն

Ընդհանուր առմամբ տարածքում զարգացած է մարգագետնատափաստանային բուսականություն՝ Festuca, Phleum, Carex, Trifolium ցեղերի բուսատեսակների մասնակցությամբ (նկար 8):

Տորֆակուտակների տարածքում, լոկալ, մասնատված տեղամասերով՝ աճում է ջրաճահճային բուսականություն: Ֆլորային պարզեալային սպեկտրում գերիշխում է Asteraceae ընտանիքը, աննշան զիջում են Poaceae և Fabaceae ընտանիքի բույսերը:

Հայցվող տարածքի մակերեսը ծածկված է բուսազանգվածով, որը ներկայացված է եղեգնա-բոշխային տեսակների, շերեփուկախոտի, կյունի, ճահճախոտի, մակարդախոտի, կեռոնների, դրանց չորացած և կիսափթած արմատների և ցուղունների, ինչպես նաև կանաչ մամուռների խառնուրդով:

Կենդանական աշխարհի ներկայացուցիչներից բազմազան են հասկապես միջատները՝ ճպուռներ, ուղղաթևեր, թիթեռներ, բզեզներ:

Ըստ գրական տվյալների, կենդանական պլանկտոնը ներկայացված են Rotatoria, Cladocera և Cyclopoida տեսակներով, իսկ բենթոսը՝ Crustacea, Diptera, Odonata տեսակներով:

Երկկենցաղներից դիտարկվել են կանաչ դողոշը և լճագորտը, թշուններից՝ սարյակ, խաղտոտիկներ, կեռնեխ և ճնճուկներ:

Խոշոր կաթնասուններից հանքի շրջանում գրեթե ամենուր հանդիպում են եվրոպական նապաստակը (*Lepus europaeus*) և աղվեսը (*Vulpes vulpes*):

Տարածաշրջանում հանդիպում է նաև Ներկարար /*Coraciformes*/,

#### Արտաքին կառուցվածք՝

Մարմնի երկարությունը մինչև 34 սանտիմետր է, քաշը՝ 180-200 գրամ: Փետրավորումը կոշտ է, կապտականաչ, մեջքը և թևերը (վերևից)՝ ժանգադարչնագույն:

#### Տարածվածություն

Տարածված է Եվրոպայում, Հարավարևմտյան Ասիայում և Հյուսիսարևմտյան Աֆրիկայում: Հայաստանում հանդիպում է (ապրիլի վերջերից մինչև սեպտեմբեր) բանջարանոցներում, այգիներում և առավելապես տափաստաններում ու կիսաանապատներում՝ մինչև 2500 մետր բարձրության վրա:

#### Բնադրում

Ներկարարները բնադրում են փշակներում կամ դարավանդներում, գետնափոք բներում: Դնում է 4-6 սպիտակ ձու, թխսում 18-19 օր:

#### Մննդառություն

Մնվում է միջատներով, փոքր անողնաշարավորներով, մանր կրծողներով, ամռան վերջին՝ նաև խաղողով:

Փոքր ճագարամուկ /*Allactaga elater*/ կենդանատեսակները:

#### Արտաքին կառուցվածք՝

Մարմնի երկար, մինչև 120 մմ է, պոչինը՝ 175 մմ, կենդանի զանգվածը՝ մինչև 62 գ: Մարմնի կառուցվածքը տիպիկ է, մեջքի և կողքերի գույնը՝ բաց մոխրադեղնավուն: Պոչի վրձինը Եռագույն է՝ բաժանված սպիտակավուն, սև և սպիտակ մասերի: Բնակավայրերին մոտ տարածքներում սովորական է և քչաքանակ:

#### Տարածվածություն՝

Տարածված է կիսաանապատային գոտու հարթավայրերում և նախալեռներում:

Գերադասում է աղասեր և օշինդրային խմբակցություններով հարուստ վայրերը:

#### Մննդառություն՝

Մնվում է բույսերի վերև ստորգետնյա մասերով, սերմերով, երբեմն՝ միջատներով ու նրանց թրթուրներով:

#### Կենսակերպ՝

Բնակվում է մինչև 3 մ երկարության և 1 մ խորության ստորգետնյա բներում: Գործունյա է մթնշաղին և գիշերը: Շարժվում է ցատկավազքով կամ քայլելով: Ձմեռային քուն է մտնում նոյեմբերից մարտ:

#### Բազմացում և զարգացում՝

Բազմանում է տարին 1 անգամ, ունենում 2-6 ձագ: Համաճարակաբան, նշանակությունն աննշան է:

Տարածաշրջանում հանդիպում են՝

-Գորտնուկ երկարատերև- *Ranunculus lingua* L. Բույսերի կարմիր գրքում գրանցված տեսակը: Կատեգորիա. EN\* B 1 ab (i,ii,ii,iv)+ 2 ab (i,ii,ii,iv): Այն վտանգված տեսակ է, հայտնի է մեկ պոպուլյացիա, տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում աչելավայրերի պայմանների փոփոխության պատճառով: Նկատի ունենալով, որ տեսակի հիմնական տարածման շրջանը գտնվում է Հայաստանի սահմաններից դուրս սպառնալիքի կատեգորիան իջեցվել է մինչև EN: Հայաստանի կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր: Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներով:

- Ջրաշուշան սպիտակ: - *Nymphaea alba* L., Կատեգորիա. EN B 1 ab (iii)+ 2 ab (iii): Այն վտանգված տեսակ է, հայտնի է

Լոռու սարահարթի ռելիեֆային լճերից: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ կմ-ից պակաս է: Նախկինում, մինչև 1930թ աճում էր նաև Աարանի ֆլորիստիկ շրջանում, Մարմարիկ գետի միջին հոսանքի ձախափնյա ողողատներում գետի զարնանային վարարումներից առաջացած փոքրիկ լճակներում: Այստեղ տեսակը ոչնչացել է բնական և մարդածին գործոնների բացասական ազդեցության հետևանքով՝ Մարմարիկի սակավաջրության, ժամանակավոր լճակները ցամաքելու, տնտեսական գործունեության և այլ պատճառներով: Տեսակին Հայաստանում սպառնում է անհետացում տնտեսական գործունեության ընդարձակման և կլիմայի գլոբալ փոփոխության պատճառով: Հայաստանի կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 3 կրճատվող տեսակ կարգավիճակով:

-Մրգահավ- *Crex crex*, կարգավիճակը խոցելի տեսակ է: Ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում )(ver. 3.1) <<Near Threatened>> կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես Խոցելի՝ VU B1ab(iii)+2ab(iii):

Վերը նշված տեսակներն հանդիպում են տարածաշրջանում, իսկ բուն հայցվողիամար հայցվող տարածքում կենդանիների բներ, որջեր չի դիտարկվել, չկան նաև բնադրող թռչունների բներ:

▪ **Վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ**

Տարածքը չի հանդիսանում բնության հատուկ պահպանվող տարածք: Բնության պահպանվող ամենամոտ տարածքը Գյուլագարակի պետական արգելավայրն է, որը գտնվում է հանքավայրի տարածքից մոտ 22կմ հեռավորության վրա: Արգելավայրը հիմնադրվել է 1958 թվականին, զբաղեցնում է 2576 հա տարածք, գտնվում է ՀՀ Լոռու մարզում, Բագումի և Գուգարաց լեռների լանջերին, Քարհանք-ջուր գետակի հովտում, ծովի մակարդակից 1300-1850մ բարձրության վրա: Պահպանության օբյեկտներն են՝ ռելիկտային սճու անտառները:

Հայցվող տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ չեն արձանագրվել:

Տարածաշրջանում ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված տեսակներից հայտնի են.

- թրաշուշան Ջավախքի - վտանգված տեսակ, աճում է Տաշիր քաղաքի և Ուրասար գյուղի շրջակայքում, հայցվող տարածքից 7.5կմ և 11.5կմ հեռավորության վրա,

- ջրաշուշան սպիտակ- վտանգված տեսակ, հայտնի է Լոռու սարահարթի լճակներից, հայցվող տարածքին ամենամոտը գտնվում է մոտ 8կմ հարավ,

- նեղտերև Դոդոնի - վտանգված տեսակ, աճում է Տաշիրի շրջակայքում, հայցվող տարածքից մոտ 7.5կմ հեռավորության վրա,

- գորտնուկ երկարատերև- վտանգված տեսակ է, աճում է Տաշիր քաղաքի, Սարատովկա և Նովոսելցովո գյուղերի շրջակայքում՝ գետերի աջին, խոնավ վայրերում, հայցվող տարածքին ամենամոտ լոկալիտը գտնվում է մոտ 4կմ հեռավորության վրա:

ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակներից հայցվող շրջանում գիտական ուսումնասիրությունների տվյալներով հայտնի են.

- նեղ խիտունջ- հազվագյուտ տեսակ, հայտնի է Ստեփանավան քաղաքի շրջակայքում, հայցվող տարածքից մոտ 16.5կմ հեռավորության վրա,

- ճպուռ ճահճային- ծայրահեղ հազվագյուտ տեսակ, հայտնի է Ստեփանավան քաղաքի շրջակայքում, հայցվող տարածքից մոտ 12կմ հեռավորության վրա,

- ստեփանավանյան առվակային գնայուկ և մթնաշաղային կապտաթիթեռ

- հազվագյուտ տեսակներ, հայտնի են Ստեփանավան քաղաքի շրջակայքում, հայցվող տարածքից մոտ 13կմ հեռավորության վրա,

- Տարգալակտուզ - անհետացող տեսակ, հայտնի է Ստեփանավանի շրջանի գերիսնավ տարածքներում, Արփի լճում, հայցվող տարածքից 16-30կմ հեռավորության վրա,

- սպիտակաաչք սուզաբադ և մոխրագույն կռունկ - քիչ տարածված տեսակներ են, հայտնի են Ստեփանավանի լճակներից, հայցվող տարածքին ամենամոտը գտնվում է մոտ 7կմ հարավ,

- բալոբան - անհետացող տեսակ, հայտնի է Ստեփանավան քաղաքի շրջակայքից, հայցվող տարածքից մոտ 16կմ հեռավորության վրա:

- ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N967-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ տարածքի բնության հուշարձանների ցանկը:

ՀՀ Լոռու մարզում հաշվառված են հետևյալ բնության հուշարձանները

Հ/Հ	Անվանումը	Տեղադիրքը
1	«Բազալտանման ապարների (Դիաբազների) գոլավոր դայք»	Ալավերդի քաղաքային համայնք, Լավար գետի միջին հոսանք, կիրճի աջ ափին՝ Դարկ լեռնագագաթի հարավ-արևելյան ստորոտին, Ալավերդի «Լենհանքեր» ավտոճանապարհից մոտ 300 մ դեպի արևմուտք, Մադան գյուղի արևմտյան ծայրամասից մոտ 500 մ դեպի արևմուտք
2	«Գետնանձավ» անձավային թունել	Լոռի Բերդ գյուղից 2 կմ հվ-արլ, Չորագետի ձախ ափին, հունից 40 մ բարձրության վրա
3	«Չորագետի հրային ներժայթուկ»	Չորագետ և Փամբակ գետերի հատման կետում, Ալավերդի-Վանաձոր ավտոմայրուղու աջ կողմում՝ մոտ 10 մ չհասած առաջին թունելի մուտք
4	«Տրավերտիններ դոլերիտային բազալտներում»	Մարց գյուղի խաչմերուկից մոտ 50 մ վերև, Մարց-Աթան գրունտային ավտոճանապարհի ձախ կողմում
5	«Թռչկան» ջրվեժ	Մեծ Պառնի գյուղական համայնք, Չիչխան գետի աջակողմյան Թռչկան վտակի վրա
6	«Դսեղի Ծովեր» լիճ	Դսեղ գյուղից 3 կմ արևելք-հարավ-արևելք, Սևորդաց լեռնաշղթայի Ծովիղաշ լեռնագագաթի հյուսիսային լանջի ափսեաձև գոգավորությունում
7	«Շամլուղի լճակ»	Շամլուղ գյուղական համայնք
8	«Օձի պորտ»	Արդվի գյուղական համայնքի արևելյան մասում, Հովնան Օձունեցու կաթողիկոսի մատուռից 120 մ հյուսիս-արևմուտք
9	«Քոշաքարի մրտավարդ»	Մարգահովիտ գյուղական համայնքի հյուսիսային սահմանագծից մոտ 1 կմ հեռավորության վրա, Գուգարքի անտառտնտեսության Եղեգնուտի անտառպետության բարձրադիր գոտում

Հայցվող տարածքում բնության հուշարձաններ հաշվառված չեն: Լոռու մարզի բնության հուշարձաններից հայցվող տարածքին ամենամոտ գտնվողը «Գետնանձավ» անձավային թունելն է՝ հանքի տեղամասից մոտ 18կմ հեռավորության վրա:

#### **- Թափոնների կառավարում**

Տաշիր համայնքի տարածքում աղբահանության նպատակով բնակելի թաղամասերում տեղադրված են աղբահավաք տարողություններ և աղբարկղներ: Աղբահեռացումը կատարվում է կանոնավոր:

Շինարարական աշխատանքերի ընթացքում, առաջացող թափոնատեսակներն են՝ կենցաղային աղբը /ծածակագիրը՝ 9120040001004/՝ մոտ 0.66տ /յուրաքանչյուր ամիս մոտ 110կգ /110x6=660կգ/, որը կհավաքվի աղբահավաք կոնտեյներներում և կտեղափոխվի մոտակա աղբավայր, և 12 խմ շինարարական աղբը /քանի որ քանդման աշխատանքներ նախատեսված չեն, ամբողջ շինարարության ընթացքում կառաջանա մոտավոր 12խմ շինարարական աղբ՝ չօգտագործված շինանյութեր և այլն/ /ծածակագիրը՝ 9120060101004/ (հիմնականում կազմված են իներտ ֆրակցիաներից) (բետոն, և այլն, ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Ըստ ԱԷԿՏԿ քաղաքաշինական դասակարգման նախատեսվող շինությունները դասվում են խումբ Գ.-ին՝ վնասակարության ցածրաստիճան արտանետումների աղբյուր հանդիսացող, կամ վնասակար արտանետումներ չունեցող արտադրություններ: Վերջիններս բավարարում են ընդունված ՄՆ 245-71 սանիտարական նորմերին, ըստ որի. արտադրական օբյեկտների հողամասերի սահմանից հեռավորությունը մինչև բնակելի և հասարակական շենքերը, ինչպես նաև հանրակրթական դպրոցների և նախադպրոցական, առողջապահական և հանգստի հաստատությունների հողամասերի սահմանները պետք է ընդունել 50 մետրից ոչ պակաս:

3 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ  
ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ  
ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Բոլոր տիպի շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով պետական նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարական հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից հաստատված դրույթներով, շինարարական հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Հաշմանդամների և բնակչության սակավաշարժության խմբերի մատչելիության վերաբերյալ միջոցառումներ առաջնորդվելով ՀՀՇՆ 4-11.07.01-2006 շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար շինարարական նորմերի պահանջներով:

Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

- ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն հայտում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

## **- ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ**

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- փոշու արտանետումներ հիմքերի փորման ընթացքում
- վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ (CO, NO<sub>x</sub>):

### **3.4 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ**

#### **ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

##### **- ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴ**

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- շինարարական աշխատանքների /փոշեգոյացնող աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,
- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգադրում:
- շինարարական նյութերի (ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականացվի փակ ծածկով մեքենաներով.

##### **- ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,

##### **- ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- Շինարարական գործընթացներում ներգրավված տեխնիկայից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ

տեխնիկական վիճակ, ինչպես նաև ներգրավվի ժամանակակից տեխնիկական միջոցներ:

- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- Կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նորմերի: Տարածքում նախատեսվում է տնկել տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներ և թփեր:
- Կանաչապատման աշխատանքներն իրականացնելիս կառաջնորդվեն ՀՀ կառավարության 08.02.2018 թվականի N 108-Ն որոշման դրույթներով:
- Կենսբազմազանության պահպանության միջոցառումներ:
- համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի ՈՀիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:
- Նախատեսվող կանաչապատման աշխատանքների համար անհրաժեշտ կլինի բուսահողի լիցք, որի ձեռքբերումը, տեղափոխումը և օգտագործումը կիրականացվի գործող օրենսդրության պահանջներին համապատասխան՝ նախապես համաձայնեցվելով Տաշիրի քաղաքապետարանի հետ:

- ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- Հրդեհի առաջացումը
- Հեղուկ նյութերի արտահոսքը
- Աշխատողների վնասվածքները
- Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ

## միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը ոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:
- հակահրդեհային անվտանգության միջոցառումների ապահովման նպատակով տարածքում նախատեսվում է հրշեջ հիդրանտի տեղադրում):
- Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հագեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:
- Շինարարական աշխատանքների ժամանակ՝
  - ա) մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,
  - բ) հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,
  - գ) շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:
- Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:
- բոլոր աշխատողներին տրվելու են անհատական պաշտպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:

- Նախատեսվող գործունեության հայցվող տարածքում առկա վտանգավոր օբյեկտները

«Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով կներկայացվեն տեխնիկական անվտանգության փորձաքննությունների

- իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքում ղեկավարվել Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:
- ինչպես անձրևաջրերը հեռանում են բակային տարածքներից դեպի փողոց՝ հարակից սելավատար, այնպես էլ մեքենաների անիվների լվացման ջրերը:

Ըստ նախնական գնահատման, ապահովվելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների և առողջապահական ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

- ԱՂՄՈՒԿԻ և ԹՐԹՌՈՒՄՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում:
- պարբերապար ստուգել և կարգադրել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները,
- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:

Հայցվող տարածքում աղմուկի առաջացման աղբյուրներն են՝ շինարարական աշխատանքները, որոնք կրում են ժամանակավոր բնույթ և ավտոտրանսպորտը: Աղմուկից պաշտպանվող օբյեկտ հանդիսանում է գյուղը, որը գտնվում է

նախատեսվող ծածկարաններից զգալի հեռավորության վրա: Քանի որ մոտակա գյուղը գտնվում է աղմուկի աղբյուրից բավականին հեռու, ապա աղմուկի մակարդակը հաշվարկվում է սանիտարա-պաշտպանիչ գոտու սահմանին (հեռավորությունը աղմուկի աղբյուրից 500մ): Տեխնիկայի և բեռնատար տրանսպորտի աշխատանքներից գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը LAէկվ սահմանված է 79ԴԲԱ (համաձայն գործող նորմերի): Աղմուկի մակարդակը աղմուկից պաշտպանող տարածքի հաշվարկային կետում որոշվում է՝

LAտար = LAէկվ - լLAհեռ - լLAէկր - լLAկանաչ

Որտեղ՝

LAէկվ - աղմուկի աղբյուրի ձայնային բնութագիրը, LAէկվ=79ԴԲԱ

լLAհեռ - աղմուկի մակարդակի նվազումը հաշվարկային կետի և աղմուկի աղբյուրի միջև հեռավորությունից կախված

լLAհեռ 500մ-ի վրա կազմում է 28ԴԲԱ

լLAէկր - աղմուկի մակարդակի նվազումը էկրանով: լLAէկր =14ԴԲԱ Հայցվող տարածքը տվյալ դեպքում ծառայում է որպես էկրան:

լLAկանաչ- աղմուկի մակարդակի նվազումը կանաչ գոտիով, լLAկանաչ=0ԴԲԱ

Աղմուկի մակարդակը սանիտարա-պաշտպանիչ գոտու սահմանին կկազմի՝ LAտար = LAէկվ - լLAհեռ - լLAէկր - լLAկանաչ = 79 - 28 - 14 = 37ԴԲԱ Հաշվի առնելով ծածկարանների տարածքի հեռավորությունը մոտակա բնակավայրերից, մեկ հերթափոխով աշխատանքային ռեժիմը՝ գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը շրջակա բնակավայրերի տարածքում կլինի բնակելի գոտիների համար սահմանված նորմերից /45ԴԲԱ/ շատ ցածր:

Աղմուկի մակարդակը գիշերային ժամերին գտնվում է նորմերի սահմաններում և կազմում է 32ԴԲԱ (նորման 35ԴԲԱ):

#### 4. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ;
2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ;
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ;
4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
5. Շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի,

անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված մշտադիտարկում՝ համաձայն ՀՀ կառավարության 2020թ. հուլիսի 2-ի նիստի N 87 արձանագրության պահանջների,

6. Կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունը պետք է հետևողական լինի տնկված ծառերի աճի և խնամքի համար, ոչ կեսունակ ծառերը և թփերը կփոխարինվեն նորերով:
7. Նախատեսվում է համաձայն ՀՀ կառավարության 2002 թ. ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի՝ Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է ամբողջ շինարարության ընթացքում հատկացնել 250000 դրամ:

Մշտադիտարկում և բնապահպանական միջոցառումներ, շին. փուլ/ դրամ		
Տարածքի ջրցան փոշեգոյացումը կանխելու նպատակով		100000
Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ;		50000
Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:		50000
հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ		50000
Ամբողջ շինարարության համար		250000

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	ՊԱՐԱՄԵՏՐԵՐ	ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ
Ընդհանուր դրույթներ	Նախազգուշացումներ և աշխատողների անվտանգություն	<p>(a) Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները և համայնքը պետք է նախազգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ</p> <p>(b) Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունները ձեռք են բերվել</p> <p>(c) Կապալառուն պաշտոնապես համաձայնել է, որ աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան տնտեսությունների և շրջակա միջավայրի վրա:</p> <p>(d) Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ)</p> <p>(e) Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ:</p>
Շինարարական աշխատանքներ	Օդի որակ	<p>(a) Շինաշխատանքների իրականացման ընթացքում հատուկ տարողություններ կկիրառվեն շինարարական աղբի հեռացման համար՝ Նշված տարողությունները պետք է պահպանվեն տարածքում և անընդհատ ցողվեն ջրով՝ թափոններից գոյացած փոշու քանակը նվազեցնելու նպատակով</p> <p>(b) Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով</p> <p>(c) Շինարարական տրանսպորտային միջոցների պարապորդ շինհրապարակում չի թույլատրվի:</p> <p>(d) Շինարարության ընթացքում համաձայն մթնոլորտային օդի պահպանության մասին օրենքի, փոշեգոյացումը կանխելու նպատակով շենքերը կծածկվեն անթափանց թաղանթով</p>
	Աղմուկ	<p>(a) Շինարարական աշխատանքներից գոյացած աղմուկը կսամանափակվի թույլատրված ժամերի միջակայքում</p> <p>(b) Շինարարական աշխատանքների ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականության միջոցով սարքերը պետք է ծածկվեն:</p>

	<p>Թափոնների կառավարում</p>	<p>(a) Շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր:</p> <p>(b) Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից</p> <p>(c) Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն</p>
<p>Կեղտաջրերի հեռացում</p>	<p>Ջրի որակ</p>	<p>(a) Շինարարության և շահագործման փուլերում հաշվի առնելով որ Մեծավան բնակավայրը չունի ոռոգման ջրի ցանց, ուստի նախատեսվում է օգտագործել խմելու ջուրը: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն տեղադրելով բիոզուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով:</p> <p>(b) Շինարարական տրանսպորտային միջոցները և սարքավորումները պետք է լվացվեն նախատեսված տարածքներում, որտեղից ջրի արտահոսք չի լինի:</p> <p>Շինհրապարակից ելքի ժամանակ լվացվում են տեխնիկական միջոցների անվաղողերը: Ինչպես անձրևաջրերը հեռանում են բակային տարածքներից դեպի փողոց՝ հարակից սելավատար, այնպես էլ մեքենաների անիվների լվացման ջրերը:</p>

<p>Հետիոտների և երթևեկության ապահովություն</p>	<p>Շինարարական աշխատանքների հետևանքով հետիոտներին կամ հանրային տրանսպորտին սպառնացող ուղղակի կամ անուղղակի վտանգներ</p>	<p>(a) Շինարարության ազգային նորմերի համաձայն կապալառուն պետք է ապահովի պատշաճ անվտանգություն և շինարարությանն առնչվող երթևեկության կարգավորում, ինչը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով.</p> <ul style="list-style-type: none"> <li>▪ պարզ տեսանելի ցուցանակներ, զգուշացնող նշաններ շինհրապարակում հանրությանը պոտենցյալ վտանգների մասին նախազգուշացնելու համար, պետք է առկա լինեն պատնեշներ և շրջանցող ուղիներ</li> <li>▪ Անձնակազմի կրթման համակարգ և երթևեկության կառավարման համակարգ, հատկապես՝ շինհրապարակ մուտք գործելու և հարակից տարածքում ծանր տրանսպորտի համար: Հետիոտների համար անվտանգ անցումներ երթևեկության զոնայում:</li> <li>▪ Համապատասխանեցնել աշխատանքային ժամերը երթևեկության ակտիվության հետ, խուսափել ակտիվ երթևեկությունից՝ մարդկանց ակտիվ տեղաշարժի ժամերին:</li> <li>▪ Երթևեկության ակտիվ կառավարում շինհրապարակում փորձված և երևացող անձնակազմի կողմից, եթե վերջինս անհրաժեշտ է մարդկանց ապահով և հարմար անցուղարձի համար.</li> <li>▪ Պետք է ապահովվի ապահով և շարունակական մոտեցում դեպի գործող գրասենյակային շինությունները, խանութները և բնակելի շինությունները շինարարական աշխատանքների ընթացքում:</li> </ul>
--	---	--

<p>Արտակարգ իրավիճակների կառավարում</p>	<p>Շինարարական աշխատանքների հետևանքով արտակարգ իրավիճակների կառավարում</p>	<ul style="list-style-type: none"> <li>- Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում;</li> <li>- Շինարարական բոլոր տեղամասերում անհրաժեշտ է ապահովել արտակարգ պատահարների դեպքում կոնտակտային տվյալները, պատասխանատու անձանց և անվտանգության պատասխանատուի անուն(ները), հեռախոսահամարները պարունակող պաստառների առկայությունը;</li> <li>- Շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, հրշեջ հիդրանտներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:</li> <li>- Մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանց թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար:</li> <li>- Հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում՝ ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ</li> <li>- Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների (քամու արագություն, անհողմություն, մառախուղ) դեպքում աշխատանքներն իրականացնել պահպանելով անվտանգության բոլոր կանոնները կամ շին. աշխատանքները դադարեցնել մինչ օդերևութաբանական պայմանները կլինեն բարենպաստ աշխատանքները վերսկսելու համար:</li> </ul>
---	--	---

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ

Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Որտեղ իրականացնել	Ինչպես իրականացնել	Ժամանակամիջոց	Կատարող
Շինանյութերի մատակարարում	Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից	Մատակակարի հիմնարկում կամ պահեստում	Փաստաթղթերի ստուգում	Մատակարարման պայմանագրերը կնքելու ընթացքում	Կապալառու
Շինանյութերի և թափոնների տեղափոխում Շինարարական տեխնիկայի տեղաշարժ	<ul style="list-style-type: none"> <li>- Մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում</li> <li>- Բեռնատարերի բեռնվածության սահմանափակում</li> <li>- հերթականության ապահովմամբ</li> <li>- Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>- Շինհրապարակ</li> <li>- Շինանյութերի և աղբի տեղափոխման երթուղիներ</li> </ul>	Շինհրապարակ տանող ճանապարհների ստուգում	Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում	Կապալառու
Շինարարական տեխնիկայի շահագործում տեղամասում	<ul style="list-style-type: none"> <li>- Մեքենաների և տեխնիկայի լվացումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում</li> <li>- Տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում</li> </ul>	Շինհրապարակ	Գործընթացների գործունեության ստուգում	Մեխանիզմների շահագործման ընթացքում	Կապալառու
Հողային աշխատանքներ	- Հանված հողերը հեռացվում են համայնքի կողմից հատկացված վայր	Շինհրապարակ	Գործընթացների ստուգում	Հողային աշխատանքների ընթացքում	Կապալառու

ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ

Իներտ շինանյութերի գնում	- Շինանյութերի գնում վստահելի մատակարարներից	Իներտ նյութերի պահեստ	Փաստաթղթերի ստուգում Գործընթացների ստուգում	Մատակարարման ընթացքում	Կապալառու, մատակարար
Կենցաղային աղբի առաջացում	- Աղբամանների տեղադրում շինարարական հրապարակում - համայնքի թույլտվություն աղբի մշտական տեղակայման վերաբերյալ	Շինհրապարակ	Արտաքին գնում	Շինարարության ողջ ընթացքում	Կապալառու, քաղաքապետարանի վերահսկողություն
Աշխատանքի անվտանգություն	- Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով - Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն	Շինհրապարակ	Մտուցման գործընթացներ	Աշխատանքների ողջ ընթացքում	Կապալառու, պատվիրատու
Կանաչապատում	Տեղանքին բնորոշ ծառաթփային բուսականության տնկում	Սեփական տարածք	Արտաքին գնում	մշտական	Կապալառու
Կենսաբազմազանություն	ՀՀ կարմիր գրքում գրանցված տեսակների	Հարակից տարածք	Մասնագիտական այց	Տարեկան մեկ անգամ	Կապալառու

## ՕԳՏԱԳՈՂԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. СНиП 2.04.02-84. Водоснабжение. Наружные сети и сооружения.
2. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами, Госкомгидромет, Ленинград, 1986.
3. Инструкция о порядке рассмотрения, согласования и экспертизы воздухоохраных мероприятий и о выдаче разрешений на выброс загрязняющих веществ в атмосферу по проектным решениям, ОНД-84-Н.

# ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Կադաստրի կոմիտե



Յուանա սլոնգմանով նվիրումով	տնօրինիչ	ճեշած	Վճարող հասցի	ՀՀ
ՀԻՊՏԵՐՈՒՆԵՐՈՒԹՅՈՒՆ	Էջ Ը. 199	ճեշած	ՀՀ ԿԵՆՏՐՈՆ ԿՈՍՏ ԿՊ ՊԵՏ	1
ՀԻՊՏԵՐՈՒՆԵՐՈՒԹՅՈՒՆ	Էջ ԿՐ. 216	ճեշած	ՀՀ ԿԵՆՏՐՈՆ ԿՈՍՏ ԿՊ ՊԵՏ	5

Սույն վկայականով հաստատվում է 19 հուլիսի 2024 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

### 1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

«ԲՈՂՈՅԱՆ» ՍՊԸ

### 2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Լոռի, համայնք Տաշիր գյուղ Մեծավան Դաշտամիջյան փողոց 1 պարիսպ

### 3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման 01042024-06-0040 վկայական, Ավարտական ակտ 09/07/2024թ. N 20

### 4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 06-074-0251-0124

Մակերեսի չափը (հա)՝ 15.5373

Նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման եւ այլ արտադրական նշանակության

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Գյուղատնտեսական արտադրական օբյեկտների

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 19072024-06-0050, գաղտնաբառ՝ IFPN8CQSTEKK

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի [www.e-codastre.am](http://www.e-codastre.am) կայքէջի միջոցով

## 5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Նպատակային նշանակությունը՝ արտադրական
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ
1	06-074-0251-0124-004	ծածկ	667.2 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
2	06-074-0251-0124-003	ծածկ	515.94 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
3	06-074-0251-0124-002	պարիսպ	81.94 քմ, 147.49 խ.մ.	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
4	06-074-0251-0124-001	պարիսպ	340.13 քմ, 612.23 խ.մ.	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

### Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ԱՐԹՈՒՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ձբաղեցրած պաշտոնը՝ Լոռու մարզային ստորաբաժանման անշարժ գույքի գլխավոր ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 19072024-06-0050, գաղտնաբառ՝ IFPN8CQSTEKK

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի [www.e-cadastre.am](http://www.e-cadastre.am) կայքէջի միջոցով

Էջ 2/2





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՏԱԾԻՐ ՀԱՄԱՅՆՔ

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅՆՎՈՒԹՅՈՒՆ (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾՄԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

N 28 25 հունիս 2024թ.

Օբյեկտ

**Ծածկարան 1-20ճ140ճ, Ծածկարան 2-16,5ճ140ճ, Ռիսկ 3-րդ աստ.**

(Գրենիի անվանումը, պատուհան, վերակառուցում, հանրացում, վերանայնագրում, գործառնական նշանակության փոփոխություն, իսկյոր ընդլայնումը, հզորությունը, որակախտության աստիճանը (կարգադրման))  
**Նախագծային փաստաթղթերի մշակման համար**

(Նախագծման փուլերը և այլն)

Գտնվելու վայրը

**գ. Մեծական Դաշտամիջյան 1**

(Ճարգի, համայնքի, փողոցի անվանումները, շենքի համարը, հողամասի ժամկադիրը)

Կառուցապատող

**<<ԲՈՂՈՅԱՆ>> ՍՊԸ , Երևանյան 6/1, 07203971**

(Կառուցապատողի անվանումը, գտնվելու վայրը, ֆրոնտալային անձի անունը, ազգանունը, ընտանիքային վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային ռասչեթն)

Առաջադրանքի տրամադրման հիմքը

**Հայր, սեփականության իրավունքի վկայական,**

(Կառուցապատման նպատակով Հայաստանի Հանրապետության քրեակոդեքսի սահմանված կառույցի հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անժողովային փաստաթղթերը)

Առաջադրանքի գործողության ժամկետը

(N 1 հավելյալի 32-րդ կետին համապատասխան)

**ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

(աստղանիշով (\*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

1. Հողամասը գտնվում է

**Արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների**

2.(\*) Հողամասի չափերը

(հողամասը դիրքը քաղաքաշինական միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը)

15,5373

(հողամասի սահմանները կորդինատային նշանադրմամբ, մասերներ (իսկ))

3. Հողամասի առկա վիճակը

**Հարթ ուղիքով**

(ոմրիմի բնութագիրը, շենքերի (այդ թվում՝ քանդան ներսևա) առկայությունը (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կանաչապարտանը, բառնկարգումը և այլն)

4.(\*) Տրանսպորտային պայմանները

**Ղաշտամիջան ճանապարհներ**

(ճանապարհների առկայությունը, երկաթուղային կայանատարների մոտեցումները և այլն)

5. Ինժեներական ցանցեր և սարքավորումներ

**Գոյություն ունեցող և նախատեսվող ցանցեր**

(ջրամատակարարման, կոմունալ, գազամատակարարման, վառ քրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր)

(նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում՝ սպորդները)

6.(\*) Կից հողամասեր

**Գյուղ հողեր**

(կից հողօգտագործումների անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված սխեմայի)

7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ)

**Բացակայում են**

(հուշարձանի անվանումը, կարգավիճակը և այլն)

8.(\*) Հատակագծային սահմանափակումներ

**Պահպանել հողամասի սահմաններից հեռավորությունը ըստ նորմերի**

(օրենսգրքում սահմանված արտադրական, պաշտպանվող օբյեկտների, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները)

## ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՊԼԱՆՆԵՐ

(աստղանիշով (\*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով Մ 1:500)

9. Ճարտարապետահատակագծային պահանջներ

**Պահպանել ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն և ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն, քաղաքային եվ գյուղական բնակավայրերի հատակագծում եվ կառուցապատում» պահանջները :**

(եղևելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվադեմիկական փաստաթղթերի պահանջներից, առկա քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում՝ կազմակերպվող) քաղաքաշինական միջավայրի պայմաններից, ստացարկություններ ճակատների ձևավորման, տանիքների, արտաքին դռների, պարտիանների համաձայնությունների և գունային լուծումների վերաբերյալ)

9.1.(\*) օբյեկտի հեռավորությունը

500

կարմիր գծից (մետր)

9.2.(\*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր)

9.3 թույլատրելի բարձրությունը (մետր)

9.4.կառուցապատման խտության գործակիցը (կառուցի (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին)

9.5.կառուցապատման տոկոսը (կառուցապատվող (անցրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով (%))

9.6.կանաչապատման տոկոսը (կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով (%))

9.7.այլ պահանջներ

10. Հողամասում գտնվող շենքերի ու շինությունների քանդման կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների հերթակառուցությունը

11. Ատորգենոյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները

12.(\*) հնժեներական ցանցեր և սարքավորումներ

12.1.(\*) ջրամատակարարում, կոյուղի, տաք ջրի մատակարարում

12.2.(\*) էլեկտրամատակարարում

12.3.(\*) գազամատակարարում

12.4.(\*) էլեկտրոնային հաղորդակցության մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրքը

40

**Առավելագույն բարձրությունը 15մ**

**Բացակայում են**

**Բացակայում են**

**Պահանջներ գոյություն ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների ու ցանցերի նկարմամբ**

**Ըստ տեխ. պայմանի**

*(Խամանայն մարտակարարող կազմակերպության փնիտիկական պայմանների)*

**Ըստ տեխ. պայմանի**

*(Խամանայն մարտակարարող կազմակերպության փնիտիկական պայմանների)*

**Չի նախատեսվում**

*(Խամանայն մարտակարարող կազմակերպության փնիտիկական պայմանների)*

**Բացակայում են**

12.5. թույլ հոսանքներ

12.6. աղբահանություն

13. Տարածքի ինժեներական նախապատրաստում

14. Բարեկարգում

15. Շինարարական նյութեր

16. Պաշտպանական կառույցներ

17. Հակահրդեհային պահանջներ

18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ

19. Շրջակա միջավայրի պահպանում

20. Շինարարության կազմակերպում

21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը

**Ազատ ջրահեռացում**

(նիվեի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումներ)

**Բարեկարգել հարակից հարվածը**

(անոշաճի պլանավորման վերաբերյալ պահանջները, կանաչապատում, ճարտարապետական փոքր մներ, ցանկատարում, գոխաղ և այլն)

**Տեղական նշանակության, ավագ. ցեմենտ. շինիայր. ցինկապար թիրեղ**

(շինարարական նյութերի օգտագործման առաջարկությունները փակեթղղի, ճակարկերի լուծումներ, արտադրին դրներ, պատրուհները վերաբերյալ)

**Ըսր նորմերի**

(արտադրող իրավեհներում մարդկաց և օբյեկտերի պաշտպանության միջոցառումները)

**Ըսր նորմերի**

(ուսանողեհայն անկրանելության ապահովման միջոցառումներ)

**Պահպանել 16 փեպրվարի 2006 թվականի N 392-Ն որոշման պահանջները**

**Ըսր նորմերի**

(շրջակա միջավայրը վրանգավոր ազդեցությունեց բացառելու միջոցառումներ)

**Շինարարությունը կազմակերպել միահերթ. բացառել շինանյութերի պահեստավորումը ընդհանուր օգտագործման տարածքներում,**

(առաջարկություններ շինարարության ինք կապված անբառնկատար ազդեցության բացառման, քաղաքային տերեսության և տրանսպորտի անեհափան աշխտանքի ապահովման վերաբերյալ)

25/06/2024-ից մինչև 25/12/2025-ը, 1 փուլ

(նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)

**ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

22. Նախագծային փաստաթղթերի

փորձաքննությանը ներկայացվող պահանջներ

**Ներկայացնել հեղինակային հսկողի երաշխավորագիր, նախագծի փորձաքննություն, ՇՄԱԳ դրական**

23. Միջանկյալ համաձայնեցում

**Եզրակածություն:**

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձաքննության արեսակը կամ նախագծողի երաշխավորագիրը՝ հղում կատարելով համապատասխան իրավական ակտին)

**«Օրենսդրությամբ նախատեսված շահագրգիռ մարմինների հետ»**

(Որովառու մարմին կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքում շահագրգիռ մարմինների հետ եւրիզային նախագծի նախնական համաձայնեցում, եղծում է նաև առաջադրանքի փոփոխման հնարավորությունը՝ N 1 հավելվածի 87-րդ կետով րախարհական դեպքում)

24. Հասարակական քննարկումներ

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով)

25. Համաձայնեցումների կամ մասնագիտական եզրակացությունների ստացում

(եղծում են սովոր սրբնկզի համաձայնեցման՝ օրենքով սահմանված պահանջները՝ իրաւորմանների ու բնութրանաահականության և այլ յիագորված մարմինների հետ, ինչպես նաև N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ննքակառուցվածքի սեմիակաապիրոշ (օգտագործողի) հետ)

26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում

27. Այլ պայմաններ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**  
Կ.Տ.



**Է. Արշակյան**

հողմասի			Գծային չափերը (մ)
Երրորդական ին (բնվման) կետեր	Կորդինատներ		
	X	Y	
9	8435068.6681	4560726.1977	69.69
10	8435100.3743	4560657.4931	137.71
11	8435123.5039	4560521.7411	68.76
12	8435135.0528	4560453.9577	90.95
13	8435150.3294	4560364.2955	134.47
14	8435016.8925	4560347.6862	80.18
15	8434936.8343	4560343.3188	38.16
16	8434898.7401	4560341.1124	49.71
17	8434849.4203	4560334.8990	138.28
18	8434711.8816	4560320.6178	121.14
19	8434670.2509	4560437.2854	192.39

1. պարիսպ			Գծային չափերը (մ)
Երրորդական ին (բնվման) կետեր	Կորդինատներ		
	X	Y	
1	8434626.8170	4560622.3971	57.07
2	8434682.4884	4560634.9765	64.77
3	8434745.4929	4560650.0106	37.17
4	8434781.7344	4560658.2491	84.84
5	8434864.3296	4560677.6167	108.71
6	8434970.5711	4560700.6310	56.01
7	8435025.2432	4560712.7818	21.88
8	8435046.6010	4560717.5286	283.57
9	8435124.9070	4560444.9800	135.06
10	8434994.1870	4560411.0290	0.30
11	8434994.1110	4560411.3104	134.75
12	8435124.5337	4560445.1930	282.98
13	8435046.3906	4560717.1746	21.68
14	8435025.2305	4560712.4718	55.93
15	8434970.6346	4560700.3378	108.71
16	8434864.3931	4560677.3235	84.83
17	8434781.8009	4560657.9566	37.17
18	8434745.5594	4560649.7181	64.77
19	8434682.5546	4560634.6839	56.76
20	8434627.1920	4560622.1743	192.08
21	8434679.5395	4560437.3672	74.60
22	8434699.6330	4560365.5252	18.51
23	8434715.2003	4560355.5103	0.30
24	8434715.0374	4560355.2584	18.62
25	8434699.3748	4560365.3346	74.71
26	8434679.2509	4560437.2854	192.39

2. պարիսպ			Գծային չափերը (մ)
Երրորդական ին (բնվման) կետեր	Կորդինատներ		
	X	Y	
1	8434722.4287	4560350.8376	12.46
2	8434733.0026	4560344.2466	260.53
3	8434985.2781	4560409.3095	0.30
4	8434985.3530	4560409.0190	260.66
5	8434732.9530	4560343.9240	12.59
6	8434722.2700	4560350.5830	0.30



Որակավորում ունեցող անձ	ԱՐՄԵՆ ՀԱՍՏԱԿՑԱՆ
Որակավորման վկայականի համարը	N-0332
Ստորագրություն	<i>[Signature]</i>
Իրավաբանական անձի անվանումը	ԱՐՄԵՆ ՀԱՍՏԱԿՑԱՆ ՈՒՐԻԴԿ
<V><	66970821
Ստորագրություն	<i>[Signature]</i>
ամիս	չափագրության 12.12.2023թ.
ամսաթիվ	հատակագծի կազմման 13.12.2023թ.

Սակերես հա		15.5373		Հողմասի			Մասշտաբ 1:500	
Տածակագիր	06-074-0251-0124	Երրորդական ին (բնվման) կետեր	Կորդինատներ		Գծային չափերը (մ)	Որակավորում ունեցող անձ	ԱՐՄԵՆ ՀԱՍՏԱԿՑԱՆ	
Նպատակային նշանակություն	արդյունաբերության ընդերք-գյուղատնտեսական և այլարտադրական նշանակության		X	Y		Որակավորման վկայականի համարը	N-0332	
Գործառնական նշանակություն	գյուղատնտեսական արտադրական օբյեկտների	1	8434626.8170	4560622.3971	57.07	Ստորագրություն	<i>[Signature]</i>	
<b>Դրացուցիչ նշումներ</b> - հողմասի հատակագիծը տրված է հաշվի առնելով տեղանքում իրարորությունը:		2	8434682.4884	4560634.9765	64.77	Իրավաբանական անձի անվանումը	ԱՐՄԵՆ ՀԱՍՏԱԿՑԱՆ ՈՒՐԻԴԿ	
		3	8434745.4929	4560650.0106	37.17	<V><	66970821	
		4	8434781.7344	4560658.2491	84.84	Ստորագրություն	<i>[Signature]</i>	
		5	8434864.3296	4560677.6167	108.71	ամիս	չափագրության 12.12.2023թ.	
		6	8434970.5711	4560700.6310	56.00	ամսաթիվ	հատակագծի կազմման 13.12.2023թ.	
		7	8435025.2377	4560712.7807	29.01		Կ.Տ.	
		8	8435053.5578	4560719.0747	35.83			